

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزیک

marzig

SPORTS MAGAZINE

32րդ ՏԱՐԻ, 2013, ԹԻԻ 11 (377) - VOL. XXXII № 11

السنة الثانية والثلاثون - العدد رقم 11



ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՄՔՈՎ

Հ.Մ.Ը.Մ. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ «ԿՈՒԿԸԼ»Ի ՀԵՏ ԻԲՐԵԻ ԱՌԱՋԻՆ ՈՉ ՀԱՍՈՒԹԱԲԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

«ԿՈՒԿԸԼ»Ի ՇՆՈՐՀԻԻ ԳՈՐԾԵՆՔ ԱԻԵԼԻ ԽԵԼԱՑԻ ՄՕՏԵՑՈՒՄՈՎ ԵՒ ՈՉ ԹԷ ԱԻԵԼԻ ԺԱՄԱՆԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՎ»

1 Յունուար 2014-ին, Հ.Մ.Ը.Մ. համաձայնագիր մը ստորագրեց «Կուկըլ»-ի հետ, իբրեւ առաջին հայկական ոչ հասութաբեր միութիւն, օգտուելու «Կուկըլ»-ի տրամադրած արհեստագիտական դիրութիւններէն: Այս համաձայնագիրով Հ.Մ.Ը.Մ.ին պիտի տրամադրուին յատուկ դիրութիւններ առաւել եւս զարգացնելու արհեստագիտական իր կարելիութիւնները: «Կուկըլ»-ը Հ.Մ.Ը.Մ.ին պիտի տրամադրէ համացանցային մարզումի եռամսեայ ծրագիր մը՝ աշխատանքի յաջողութեան համար: Ծրագիրը պիտի սկսի 7 Յունուար 2014-ին եւ համացանցային մարզումի շրջանը պիտի աւարտի երեք ամիս ետք:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանները պիտի ըլլան այս ծրագիրը առաջին օգտագործողները: Հ.Մ.Ը.Մ. ունի աւելի քան 25 հազար անդամներ՝ տարածուած 5 ցամաքամասերու մէջ: Ան ունի 104 մասնաճիւղեր, որոնց 18-ն կը գտնուին Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ՝ 6800 անդամական թիւով, իսկ 10 մասնաճիւղեր կը գտնուին Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ՝ 2000 անդամական թիւով:

«Իբրեւ համաշխարհային կառոյց, անհրաժեշտ է, որ օժանդակենք տարբեր երկիրներու եւ մասնաճիւղերու մէջ գտնուող մեր միութենականներուն եւ պաշտօնէութեան, որպէսզի նոր կարելիութիւններով հաղորդակցին իրարու հետ եւ հետապնդեն ծրագիրներու իրագործման մանրամասնութիւններն ու ընթացքը: «Կուկըլ»-ի շնորհիւ կարելի պիտի ըլլայ իրագործել այս բոլորը», հաստատեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ներքին տուեալներու ծրագիրը («տաթապէյս»-ը) պիտի չազդուի այս ծրագիրէն, որովհետեւ «Կուկըլ» կարելիութիւնը չունի որեւէ ձեւով ստուգելու կամ փոփոխութիւններ ներմուծելու հոն: Հ.Մ.Ը.Մ.ականներու անձնական տրուեալները պիտի չփոխանցուին «Կուկըլ»-ին, հաստատեց եղբ. Մկրտիչեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 10-րդ Ընդհանուր Ժողովը (Սեպտեմբեր 2011-ին) որդեգրեց ռազմավարական ծրագրաւորումի հոլովոյթին իրականացման քայլերը: Ռազմավարական ծրագրաւորումի զանազան մարտահրաւերներուն ծիրին մէջ է նաեւ արհեստագիտական նորութիւններու հետապնդումը՝ օժանդակելու համար Հ.Մ.Ը.Մ.ի զանազան աշխատանքներուն:

«Կուկըլ»-ը Հ.Մ.Ը.Մ.ին պիտի տրամադրէ արդի արհեստագիտութեան աշխատանքային նոր կարելիութիւններ եւ դիրութիւններ՝ նշուած նպատակներուն իրագործման համար:

«Ներքին աշխատանքներու դիրութեան կողքին, «Կուկըլ»-ի ընծայած կարելիութիւններով կարելի պիտի ըլլայ մեր անդամները աւելի իրազեկ դարձնել Հ.Մ.Ը.Մ.ի կայք էջին ու զիրենք մղել, որպէսզի իրենց ներդրումը ունենան անոր յաջողութեան մէջ: Նաեւ կարելի պիտի ըլլայ յատուկ ծրագիրով (Analytics) հետապնդել եւ ստուգել ընկերային ցանցերու ազդեցութիւնը», նշեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Դաւթեան:

Ներկայիս 5 միլիոն առեւտրական հաստատութիւններ տարեկան դրութեամբ 50 ամ. տուլար կը վրձարեն «Կուկըլ» ծրագրի իւրաքանչիւր գործածողի հաշուոյն՝ օժանդակելու համար իրենց հաստատութեան աշխատանքներուն: «Կուկըլ»-ը ոչ միայն ծրագրաբար այս կարելիութիւնները տրամադրեց Հ.Մ.Ը.Մ.ին, այլ նաեւ երեք միութենականներ պիտի բոլորեն անվճար ուսուցողական եռամսեայ դասընթացք մը, շաբաթական 8 ժամուան դրութեամբ, 12 շաբաթներու վրայ երկարող: «Կուկըլ» պիտի հետեւի եւ պիտի մարզէ զանազան մասնաճիւղերէ 100 Հ.Մ.Ը.Մ.ական անդամներ եւ պաշտօնէաներ՝ գործածելու իր համացանցային ծրագիրները, ինչպէս նաեւ պիտի տրամադրէ ուսուցողական լուրջ ու կարելոր դասընթացք մը Հ.Մ.Ը.Մ.ական համացանցային երեք պատասխանատուներու, որոնց պիտի փոխանցուին «Կուկըլ»-ի զանազան ծրագիրներու (ինչպէս՝ AdWords, Analytics, You Tube եւ այլն) մասնագիտական գործածութեան մանրամասնութիւնները»,



ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐՈՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ակնարկ 3
- Պատմություն 6
- Անդրադարձ 10
- Դէմքերու հետ 11
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 17
- Մեր Կորուստները 37

ԲԱԺԻՆՆԵՐ

- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40




ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ իր նախկին անդամներէն՝

ԵՂԲ. ՎԱՅՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 1 Յունուար 2014 ին, Ֆլորիտայի մէջ:



Մարզական ամսաթերթ
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

3207 ՏԱՐԻ, 2013, ԹԻՒ 11 (377)

ԽՄԲԱԳԻՐ

Վիգէն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սեւան Նազարեան (Ֆրանսա),
 Սեդա Պէշլեան-Սաղպազարեան,
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.
 Եսահանգներ), Յակոբ Խաչատուրեան
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ
 Յովհաննիսեան (Հայաստան)

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Պատրիկ Կիւլպէնկեան
 Գրիգորիս Պողարեան
 Արօ Մոսիկեան

Էջադրում - Արշօ Պալեան
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան

Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ

Հեռ: 01/248043, Fax: 01/260117

E-mail: marzig@homenetmen.org

P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 4000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 48000 Լ.ո.:

Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$70,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



ԽՆՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՄՔՈՎ

(ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Երեք տարի է մութ ամպեր մթազնած են Հ.Ս.Ը.Մ.ական կեանքի երկնակամարը ասպնջականութեան եւ խաղաղասիրութեան երկրին մէջ: Անորոշութիւնը կամար նետած է Սուրիոյ հայութեան կեանքին վերեւ: Քաղաքական, ապահովական եւ ընկերատնտեսական սուր տագնապները ծանր կորուստներու մատնած են հալէպահայութիւնը: Կորուստներէն վերջինը Հ.Ս.Ը.Մ.ի Հալէպի պարտէզ-մարգարանին հրկիզումն է՝ կոյր հրթիռի մը գոհը դառնալով:

Հրթիռներու ժխորը կանգ չէ առած տակաւին: Մահը ինքզինք կը պարտադրէ կեանքին, խաւարը՝ լոյսին, ատելութիւնը՝ համաձայնութեան, քառսը՝ խաղաղութեան: Մտահոգիչ այս կացութեան մէջ, համայն հայութեան աչքերը սեւեռած են Հալէպի հայութեան վրայ, որուն յոյսի արեւը ստուեր չէ տեսած ու պիտի չտեսնէ: Հալէպը, որպէս մայր գաղութ, ազգային իր կառոյցներով ու միութիւններով, կը մնայ կանգուն, անխորտակելի, որովհետեւ ան խարսխուած կը մնայ հայու կրանիթեայ կամքին ու հաւատքին վրայ: Հալէպահայեր ամէն օր կը քալեն մահուան հետ, բայց մահէն անդին մի՛շտ կը նային կեանքին ու կեանքով կը լեցուին: Հայու վճռակամութեամբ եւ նախանձախնդրութեամբ անոնք կառչած կը մնան իրենց իրաւունքներուն, իրենց ինչքերուն ու իրենց պատիւին: Յարգանք իրենց:

Արի ու միակամ կեցուածքով, շրջա-հայեաց եւ իմաստուն քաղաքականութեամբ, հալէպահայեր կը վայելեն յարգանքն ու գնահատանքը բոլորին, հայուն թէ օտարին, դրացիին թէ հեռաւորին: Իրենց կեանքով ու գործով անոնք ցոյց կու տան, թէ հայը գիտակից է ու կարող իր կեանքին ընթացքը ի՛նք ճշդելու, ինքն իր տէրը ըլլալու: Ու անելին, միայն շինելու ու վերաշինելու,

կերտելու եւ ստեղծագործելու իրենց ոգիով, անոնք իրենց կեանքը կը պահեն կազմակերպ, կառոյցները՝ կենսունակ: Պատի՛ւ իրենց:

Ճիշդ է, սուրիական տագնապի քաղաքական հորիզոնը կը մնայ անորոշ, սակայն ամէնօրեայ ապրուող կեանքը որոշակիօրէն բոլորին կը թելադրէ առաջնորդուիլ տեսաբար վերականգնելու եւ վերակազմակերպուելու կամքով: Ամէն գնով պէտք է վերականգնել վնասուածը, վերաշինել քանդուածը, վերակերտել եղծուածը, ամրացնել մեր ներքին տունը, զօրացնել գաղութը պահող կառոյցները, միշտ մեր ժողովուրդի միութեան ամուր պատուանդանին վրայ կանգնած: Մեծով ու պըգտիկով եւ ամբողջական նուիրումով պէտք է լծուիլ հալէպահայութեան վերքերը դարմանելու տենդագին ու անյետաձգելի աշխատանքին:

Աշխատանք մը, որուն մէջ հալէպահայութիւնը առանձինն պէտք չէ ձգել: Արդարեւ, համայն հայութիւնը այսօր կոչուած է հալէպահայութեան յոյսին խառնել ու ի՛ր յոյսը, հալէպահայութեան քրտինքին՝ ի՛ր քրտինքը, լուծալին՝ ի՛ր լուծան, ի խնդիր գաղութի վերականգնումի ճիգին:

Ազգապահպանման ու մեր ազգային իրաւունքներու հետապնդման պայքարին մէջ անփոխարինելի դեր վերապահուած է հալէպահայութեան: Գաղութը անցեալին փաստը տուած է, որ ինք գիտակից է իր առաքելութեան: Հալէպահայութիւնը պէտք է մնայ ուժեղ եւ կազմակերպ Սփիւռքի՛ն համար, Հայաստանի՛ն համար, բովանդակ հայութեան գերագոյն շահերուն եւ իտէալներուն համար:

Ա՛յս է որ կը սպասէ Սփիւռքի հայութիւնը:

Ա՛յս է որ կը պահանջէ մայր հայրենիքը:

Ա՛յս է որ կը թելադրէ հայոց պատմութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի 95-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝

ԴԱՐ ՄԸ ԵՒ ԱՆՊԻՒՆ

«Ով որ այլևս չի կրնար կանգ առնել մտածելու եւ մեծ ակնածանքով մնալու, կենդանի մեռեալ մըն է, անոր աչքերը փակ են»:

ԱԼՊԵՐԹ ԱՅՆՇԹԱՅՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւն
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ



Հ պարտանալու բազմաթիւ պատճառներ ունինք: Հպարտ ենք հայ երիտասարդներուն ծառայութիւններ մատուցանելու 95 տարուան մեր հարուստ պատմութեամբ եւ աւանդութեամբ: Հպարտ ենք, որ կը շարունակենք պահպանել եւ հաւատարիմ մնալ մեր հիմնական առաքելութեան՝ սերմանել հայ մշակոյթ եւ արժէքներ, ժառանգութեան սէր, պահպանել ազգային ապրումներ ու խորհուրդներ, ապահովել անվտանգ ընտանեկան միջնորդութեամբ եւ միջավայր մեր երիտասարդ սերունդին համար՝ զանոնք գերծ պահելով ժամանակակից ընկերային վտանգաւոր մարտահրաւէրներէ եւ սպառնալիքներէ: Հպարտ ենք եւ կը գիտակցինք, որ Հ.Մ.Ը.Մ.ական մեր մարզական ծրագիրներով, սկաուտական բանակումներով եւ տողանցքով առիթ կ'ընծայենք մեր հաւաքական ազգային հպարտութիւնը ցուցադրելու:

Մենք հպարտ ենք որ կրցած ենք ընդլայնել մեր առաքելութիւնը, հասնելու եւ ծառայելու աւելի մեծ թիւով հասարակութեան մը: Համեմատելով 1918-ի Կ.Պոլսոյ հիմնադրութեան մեր օրերուն, Հ.Մ.Ը.Մ. ներկայիս տարբեր երկիրներու մէջ ունի 25 հազար գործօն անդամներ եւ 104 մասնաճիւղեր: Մենք հպարտ ենք մեր նուիրեալ անդամներով, սկաուտներով, մարզիկներով, մարզիչներով, դաստիարակներով, ծնողներով եւ հարիւր հազարաւոր համակիրներով, որոնք ամէն օր կը գործեն առաքելութեան իսկական ապրումով, զգացողութեամբ: Մենք յատկապէս հպարտ ենք մեր «կամաւորի զգացումով», որ դարձած է Հ.Մ.Ը.Մ.ի մշակոյթը:

Մեր կազմակերպութեան պատմութիւնը եւս հպարտանալու շատ առիթներ կ'ընծեռէ: Հ.Մ.Ը.Մ. անմրցելի պատմութիւն ունի մեր երկրին եւ ժողովուրդին աջակցելու աշխատանքին մէջ:

Իր ստեղծման առաջին օրերուն, 1918-ին, Հ.Մ.Ը.Մ. յոյս ներշնչեց Յեղասպանութենէն փրկուած բազմաթիւ որբերու, որոնք իրենց ապաստանը գտան Ֆուլթայլի խումբերու եւ սկաուտական շարքերու մէջ: Սփիւռքի կազմաւորման ու կազմակերպման տարիներուն, Հ.Մ.Ը.Մ. մեծ ներդրում ունեցաւ Սփիւռքի գաղութներու կառուցման մէջ, աւելի քան 28 երկիրներու 80 քաղաքներու մէջ: 1991-էն ետք, Հ.Մ.Ը.Մ. վերադարձաւ Հայաստանի Հանրապետութիւն, ուր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը ստանձնեց Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութեան կառավարումը:

Շրջաններու մէջ ալ հպարտանալու բազմաթիւ առիթներ ունեցած ենք: Ստորեւ ներկայացուած են նուաճումներու կարգ մը օրինակներ:-

Ունինք բազմաթիւ մարզական համալիրներ, ընտանեկան միջնորդութեամբ ակումբներ:

Հպարտ ենք մեր վայելած տեղական պետական ճանաչումով: Լաւ յարաբերութիւններ մշակած ենք տեղական, քաղաքային եւ շրջանային կառավարութիւններու հետ: Կարգ մը պարագաներու նպաստներ ալ ստացած ենք իշխանութիւններէ:

Հազարաւոր պատանի-երիտասարդներու առիթը ստեղծած ենք եւ կը շարունակենք հնարաւորութիւններ ստեղծել հայրենիք այցելելու:

ԴԵՊՒ ՈՒՐ Կ՝ՈՒՂՂՈՒԻՆՔ
Հ.Մ.Ը.Մ. համամարզկային ու ազգային արժէքներով առաջնորդուող կազմակերպութիւն մըն է, որ յանձնառու կը մնայ երիտասարդներու կեանքը առանձին-առանձին բա-



րեփոխելու առաքելութեան: Այդ է պատճառը որ մենք հպարտ ենք Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալով:

Մինչ մենք բոլորս հպարտութեամբ կը նայինք եւ կը նշենք անցնող 95 տարիներու Հ.Մ.Ը.Մ-ի ուղեւորութիւնը, կ'անդրադառնանք, որ այս հիանալի նուաճումները արձանագրուած են նուիրումի, հաստատակամութեան եւ յարատեւութեան շնորհիւ: Մեր առաքելութիւնը միշտ նոյնը եղած է. հայ պատանիները, երիտասարդները օժտել առողջ, հզօր միտքով եւ մարմնով, որպէսզի անոնք յաջողին իրենց անձնական կեանքին մէջ, միաժամանակ մնան հպարտ եւ յանձնառու, հաւատարիմ հայկական իրենց ինքնութեան եւ պատկանելիութեան:

Բայց մենք մեր նուաճումներով բաւարարուած չենք եւ մեր գործունէութիւնները օրինաչափ չենք ընկալել: Կ'անդրադառնանք, որ ունինք տկար կողմեր, որոնց բարելաւման կը ձգտինք:

Հ.Մ.Ը.Մ. ճանչցուած է իբրեւ մարզական եւ սկստական կազմակերպութիւն: Մենք կը գիտակցինք, որ այսօր ծնողներն ու երիտասարդները Հ.Մ.Ը.Մ-էն բացի այլ ընտրանքներ եւս ունին: Այսօրուան անհատապաշտ աշխարհին մէջ քիչ թիւով հայեր մեզի կը միանան գաղափարական հիմքով: Մեծամասնութիւնը կը հարցնէ. «Ինձի ի՞նչ օգուտ ունի ատիկա»: Ուրեմն, անհրաժեշտ է որ մենք բարելաւենք մեր դիմագիծը, յստակացնենք մեր առաքելութիւնը:

Կ'անդրադառնանք ու կը գիտակցինք, որ ամբողջ աշխարհի մէջ սկստականութիւնը տեղաբայլի մէջ է եւ մենք կը դիմագրաւենք իսկական մարտահրաւէր մը: Բայց Հ.Մ.Ը.Մ-ի համար սկստական



թիւնը իր աւանդական հասկացողութենէն անդին՝ հայեցի դաստիարակութեան նպատող հիմնական նպատակ մը ունի: Այդ իսկ պատճառով սկստականութիւնը անհրաժեշտ միջոց մըն է մեզի համար: Մենք վճռած ենք յարմարիլ օրուան պահանջներուն եւ մեր ծրագիրները աւելի պատշաճեցնել, քաջողական եւ մատչելի դարձնել դեռահասներուն:

Մենք նաեւ կը գիտակցինք, որ թէեւ մարմնամարզը միշտ ժողովրդային պիտի մնայ, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի մարզական նպատակը պէտք է ընդգրկէ մեր մարզիկներու փոխակերպումը պարզապէս «մրցումներու մասնակցող»ներէ հպարտ հայու զգացումով, հայ գաղութին աւելիով կապուած մարզիկներու, որպէսզի անոնք աւելի լաւ մարմնաւորեն Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնն ու արժէքները:

Կը հասկանանք, որ իբրեւ երիտասարդական կազմակերպութիւն, որպէսզի արդիական մնանք, պէտք է աւելի լաւ յարաբերինք երիտասարդութեան հետ: Մենք կ'ընդունինք այն կարեւոր իրողութիւնը, որ ինչ որ կ'ընենք իրենց համար է եւ իրենց մասին է եւ ոչ՝ դեկավարութեան համար: Մենք սկսած ենք մեր կազմակերպութեան իսկական արդիականացման եւ շատ շուտով պիտի օժտուինք հաղորդակցութեան ծրագրային ծաւալուն համակարգով եւ երիտասարդութեան հետ յարաբերելու ժամանակակից բոլոր յարմարութիւններով:

Մենք ունինք նոր տեսլական մը մեր երիտասարդութեան համար: Մենք մեզ չենք բնութագրել իբրեւ բացառապէս հայաստան ընտանիքներու ծիրին մէջ գործողներ: Այսպիսի ընտանիքներ եւ անոնց երեխաները պիտի մնան մեր ամբողջը: Բայց մեր նպատակն է հասնիլ բոլոր հայերուն, ըլլան անոնք ամբողջական կամ ծնունդով մասնակի հայեր: Մեր առաքելութիւնը այժմ կը տարածուի դէպի այն երիտասարդները, որոնք հայկական դպրոց չեն յաճախել եւ թերեւս կը դժուարանան հայերէն խօսելու եւ գրելու: Մենք գործունեայ ենք եւ բաց ենք բոլորին:

Մենք պիտի օգնենք Ամերիկաներու եւ Եւրոպայի հայկական աւելի փոքր գաղութներուն, որոնք սահմանափակ մարդուժ ունին, ստեղծելով եւ կազմակերպելով Հ.Մ.Ը.Մ-ի նոր միաւորներ, դեկավարման նուազ խստապահանջ չափանիշներով:

Մենք ունինք փորձառական նոր ծրագիր մը մարմնամարզէ եւ սկստականութենէ անկախ: Այս ծրագիրը չի հակասեր, չի հակադրուիր նմանօրինակ այլ ծրագիրներու: Անիկա մասնաւորաբար ուղղուած է 18-25 տարեկաններու, զուարճութեան, ընկերային

յարաբերութիւններու, գաղութային կամաւոր ծառայութիւններու, ինչպէս նաեւ անձնական կազմաւորման, հարստացման եւ ասպարէզի որակաւորման համար:

Մենք այժմ ունինք կազմակերպչական ներքին կեանքի հզօրացման համար շարք մը նոր ձեւեր: Մենք հպարտ ենք ըլլալով առաջին ոչ-եկամտարեր հայկական երիտասարդական կազմակերպութիւնը, որ պաշտօնապէս կապուած է աշխարհի ամէնէն մեծ եւ նորարար արհեստագիտական ընկերութեան՝ «Google»-ի հետ:

Վերջապէս, մենք յստակօրէն կը գիտակցինք որ մեր եւ այլ կազմակերպութիւններու յաջող արդիւնքներուն ապահովումը էապէս կախեալ է երկու տարրէ՝ լաւ ղեկավարութիւն եւ ֆինանսական հզօրութիւն:



ԻՆՉՈ՞Ւ ԱԻԵԼԻ ՀԱՄՈՉՈՒՄՈՎ ՊԷՏՔ Է ՕԳՏԱԿԱՐ ԴԱՌՆԱԼ Հ.Մ.Ը.Մ. Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Հ.Մ.Ը.Մ. կը հաւատայ, որ Հայ Դատի լայն տեսանկիւնէն դիտուած, մեր առաքելութիւնը մեզի կը շնորհէ ծանր պատասխանատուութիւն: Մեզի համար Հայ Դատ կը նշանակէ օգնել մեր հայրենիքին՝ Հայաստանին, մնալ յանձնառու եւ հաւատարիմ պատմական անարդարութիւններու արդար լուծման, եւ վերջապէս հզօրացնել Սփիւռքի մեր գաղութները եւ սատարել հայեցի դաստիարակութեան: Կան բազմաթիւ կողմեր, որոնք շահագրգռուած ու ներառնուած են ազգային այս լայն հեռանկարով աշխատանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը կը նկատենք այդ շղթային հիմնական օղակներէն մէկը:

Հայ Դատի այս երեք հիմնական բաղադրիչներուն յաջող արդիւնքը կախեալ է միշտ պահպանուող եւ ոչ-ժամանակաւոր ռազմավարական մօտեցումէ մը: Յաջողութեան հասնիլը ժամանակի կը կարօտի եւ կենսական է մեր ներկայ եւ ապագայ սերունդները, նախկիններուն նման, կառչած պահել մեր ազգային օրակարգին:

Արագօրէն փոխուող այս աշխարհին մէջ, կարգ մը ծնողներու ներդրումը նուազած է եւ հայ վարժարաններու կատարած անգին աշխատանքը դժբախտաբար վերապահուած է աշակերտական տարիքի միմիայն հինգ առ հարիւրի համեմատութեան: Մնացեալ մեծամասնութիւնն ալ կարելոր է: Հետզհետէ կը դժուարանայ նախ՝ պատանի-երիտասարդութիւնը ներգրաւելու աշխատանքը, ապա՝ զանոնք հայկական շրջանակներու եւ հասարակութեան մէջ ներգրաւուած պահելը: Զուլման վտանգը դիմագրաւելով կարիքը կայ մեծ թիւով նորեկներու: Թէ՛ որակաւոր հայ պատրաստելը եւ թէ՛ քանակային յաւելումը կարելոր է: Հ.Մ.Ը.Մ. խոր արմատներ ունեցող կազմակերպութիւն մըն է եւ իր կառոյցին ու ծառայութիւններուն բնոյթով հայ հասարակութեան հասանելի է: Ան մեծ թիւով պատանիներ կը ներգրաւէ: Պատմականօրէն նաեւ, Հ.Մ.Ը.Մ. փաստած է եւ յաջողած է 18 տարեկանը բոլորած իր անդամները, մասնաւորաբար սկաուտները, փոխանցել գաղութային այլ պաշտօններ եւ ազգային այլ կազ-

մակերպութիւններ: Հետեւաբար, ազգային տեսանկիւնէ, այն իրողութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ. արտադրողական հայեցի դաստիարակութեան կարելոր օժանդակ մըն է, ռազմավարական մեծ արժէք կը ներկայացնէ:

Ժամանակակից ընկերային մարտահրաւէրներուն լոյսին տակ, Հ.Մ.Ը.Մ. պիտի շարունակէ մնալ անհրաժեշտութիւն մը հայկական հասարակութեան համար, երեք պարզ պատճառներու համար:-

Առաջին՝ Հ.Մ.Ը.Մ. իր համաշխարհային ընտանիքին ընդմէջէն Սփիւռքի հայ երիտասարդութեան առիթը կ'ընծայէ այլ հայերու հետ մշակելու եւ զարգացնելու ընկերային երկարատեւ յարաբերութիւններ:

Երկրորդ՝ իրենց զաւակներու կազմաւորման տարիքին, ծնողներ կը գնահատեն այն իրողութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ. պատանիներուն մէջ կ'արմատաւորէ համամարդկային անհրաժեշտ արժէքներ, ինչպիսին են՝ քաղաքացիական հաւատարմութիւն, ազգային հպարտութիւն եւ ինքնութիւն, կարգապահութիւն, խմբային աշխատանք, յարգանք, պատասխանատուութիւն, ուրիշներու հանդէպ յանձնառութիւն եւ այլն:

Երրորդ եւ վերջապէս, հայ գաղութները եւ կազմակերպութիւնները կարիքը ունին Հ.Մ.Ը.Մ.ի աջակցութեան ազգային իրենց նպատակներու իրագործման համար, որովհետեւ ըլլալով խոր արմատներով կազմակերպութիւն մը, Հ.Մ.Ը.Մ. վստահելի աղբիւր մըն է ապագայի յանձնառու եւ նուիրեալ երիտասարդներու կազմաւորման համար:

95-ամեակը պատեհ առիթը կը ներկայացնէ աւելի մօտէն ծանօթանալու Հ.Մ.Ը.Մ.ին, անոր ծառայութիւններուն եւ մեր գաղութներուն ունեցած ներդրումին ու նուիրումին: Մօտէն ծանօթանալով, միաժամանակ, աւելի դիւրին կ'ըլլայ գնահատել միութեան ազգային անփոխարինելի արժէքը եւ աւելի հրամայական կը դառնայ այդ արժէքին պահպանման համար մեր ճիգերուն կրկնապատկումն ու բազմապատկումը:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (Բ. ՇՐՋԱՆ, 1931-1940)

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, Թ. ՄԱՍ

ՀՄԼՄ-ի Ջատկուան ախոյեանական մրցումներուն անդրադառնալով, «Ազդակ» Մայիս 3-ին կը գրէ իր խմբագրական սիւնակով.-


«Երկու շաբաթ առաջ Հայէպի մէջ տեղի ունեցան ՀՄԼՄ-ի միջ-մասնաճիւղային տարեկան մրցումները: Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր շրջաններէն ՀՄԼՄ-ի մարզիկները հաւաքուեցան Հայէպ, խանդավառ ու երջանիկ մթնոլորտի մը մէջ, ողջագուրուեցան իրարու հետ եւ մարզիկի վայել կարգապահութեամբ եւ սիրով իջան դաշտ:

... «Այս աննախընթաց եւ քաջալերական երեւոյթը ցոյց կու տայ որ ՀՄԼՄ-ի հմայքը հետզհետէ աւելի գրաւիչ կը դառնայ եւ հայութիւնը մեծ յոյսով եւ վստահութեամբ իր ակնարկները սեւեռած է անոր վրայ: Եւ իսկապէս որ կազմակերպութիւնը մեր մէջ այնքան տեւական եւ տաք համակրանքի արժանացած է ժողովրդական լայն զանգուածներու կողմէ, որքան ՀՄԼՄ-ը: Վերջին տասնամեակին, հոս մեր գաղութին մէջ տասնէ աւելի մասնաճիւղեր հիմնուած են եւ երիտասարդութիւնը առանց խտրութեան հաւաքուած է անոր շուրջ: Մարզական բոլոր միութիւնները, փոքր թէ մեծ, իրենց գոյութիւնը կը պարտին ՀՄԼՄ-ին, որովհետեւ մարզական ոգին մեր մէջ զարգացնողն ու հրահրողը եղած է այս կազմակերպութիւնը: Շնորհիւ իր լաւ կազմակերպութեան եւ իր անդամներուն առողջ դաստիարակութեան, ՀՄԼՄ-ը մեր գաղութին մէջ դարձած է ազգային տեսակէտով խիստ պատուաբեր եւ օգտակար կազմակերպութիւն մը: Օտար մարզական միութիւններու հետ ունեցած բարեկամական յարաբերութիւններու եւ մրցումներու ընթացքին ցոյց տուած քաղաքակիրթ վարմունքն ու մարզիկի ոգին ՀՄԼՄ-ը առաջին կարգի մարզական միութիւններու աստիճանին դասել տուած են:

... «Հայրենակիցներ, աւելի գուրգուրանք եւ հետաքրքրութիւն պէտք է ցոյց տաք ՀՄԼՄ-ին, եւ ցոյց տաք նաեւ անոր մարզադաշտն ու սկառուտական բանակատեղին ձեր զաւակներուն...» («Ազդակ», 3 Մայիս 1933):

«Այս պահուն, երբ Հայէպ, այնքան խանդավառ եւ եղբայրական մթնոլորտի մը մէջ տեղի կ'ունենային ՀՄԼՄ-ի միջ-մասնաճիւղային հանդիպումները, միութեան Չահլէի մասնաճիւղի անդամներէն Յակոբ Պալըքճեան, երկու յաջորդական յաղթանակներով կու գար դափնեպսակ մը եւս աւելցնել հայ մարզիկի համբաւին վրայ:

1935. Հ.Մ.Ը.Մական տողանցք միջ-մասնաճիւղային խաղերու բացման հանդիսութեան:



«Ապրիլ 16, առաւօտեան ժամը 9.00-ին, Ռայաքի մէջ, մասնակցելով Իւնիոն Վելոսիփէտիք Տը Յրանսի կազմակերպած արագութեան ախոյեանութիւն միջազգային մրցումին, առաջինը հանդիսանալով, կը ստանայ պատուանշան մը պաշտօնագրով: Նոյն օրը ժամը 11-ին կը մեկնի Հայէպի Իւնիոն Սփորթիվի կազմակերպած 48 քիլոմետր երկարութեամբ մրցումին, ուր 23 մրցորդներու մէջ առաջինը կը հանդիսանայ: Ռայաքաբնակ այս մարզիկը մասնաճիւղ գոյութիւն չունենալուն համար կ'անդամակցի մօտի Չահլէին: Այլ առիթներով ան մասնակցած է վեց միջազգային մրցումներու եւ միշտ առաջին հանդիսացած է» («Ազդակ», 3 Մայիս 1933):

Ջատկուան տօնական օրերէն անմիջապէս ետք, երբ ՀՄԼՄ-ի մասնաճիւղերուն Փութպոյլի խումբերը մեկներ էին իրենց վայրերը, Պէյրութի մէջ կը սկսին կատարուիլ միջազգային ախոյեանական Փութպոյլի մրցումները, հովանաւորութեամբ միջազգային նորակազմ Փութպոյլի Ֆետերասիոնին: Այս մրցումներուն կը հրաւիրուին իրենց մասնակցու-

Թիւնը բերելու Սուրիոյ եւ Լիբանանի լաւագոյն խումբերը, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերուն առաջին խումբերը:

Մայիս 7-ին, Կիրակի, Պէյրուսի համար գեղեցիկ օր մը կ'ըլլայ: Կէսօրէ առաջ, Ս. Նշան եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղին նորընծայ սկաուտներուն երդման տպաւորիչ հանդիսութիւնը, ուր միութեան պատուակալ նախագահ Գասպար Իփէկեան կ'ըսէ.

«Չկայ հայ ժողովուրդին համար բան մը այնքան թանկագին, գուրգուրանքի, նիւթական ու բարոյական աջակցութեան արժանի, որքան հայ արիւնքը կազմակերպութիւնը: Անոնք են որ յոյսն ու ապագան կը կազմեն ցեղին...» («Ազդակ», 12 Մայիս 1933):

Հալէպի Կիւլպէնկեան վարժարանի առաջարկը, առանձին մասնաճիւղով մաս կազմելու Հ.Մ.Ը.Մ-ին, կը զբաղեցնէ Երջանային Վարչութիւնը, որ 18 Մայիս 1933-ի նիստին կ'արձանագրէ. «Այս հարցին շուրջ ժողովը դարձեալ երկար խորհրդակցութիւն ունեցաւ ու չկարողացաւ դրական որոշում մը տալ: Բայց մեծամասնութեամբ գլխաւոր կարծիքը այն եղաւ, թէ որեւէ վարժարան չի կրնար առանձին մասնաճիւղ կազմել, այլ պէտք է ենթարկուի տեղական մասնաճիւղին, դիւրութիւններ ունենալով իր վարժարանի ներքին կարգապահութեան յարմարցնելով վարժարանի սկաուտական աշխատանքները: Առ այս որոշուեցաւ գրել վարժարանի հոգաբարձութեան եւ տնօրէնութեան, թէ այդ որոշումներուն



Շիւքրի Քուէթլիի ընդունելութիւնը Զալէպի մէջ:

ընդունուիլը նախապայման է Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին մասնակցելու»:

Երուսաղէմէն Յովհաննէս Շահինեանին ուղղուած նամակը կը խնդրէր ծրագիր-կանոնագիր մը «ուսումնասիրելու եւ մասնաճիւղ մը կազմելու Հայֆայի մէջ»: Ընթացք կը արուի խնդրանքին:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ եւ Լիբանանի շրջանի ներքին կանոնագրի պատրաստութեան համար կ'որոշուի նամակ գրել կեդրոնական Վարչութեան եւ ուզել «Նոր

մշակուած ծրագիր-կանոնագիրէն գոնէ մէկ օրինակ», եւ որպէսզի մշակուելիք ներքին կանոնագիրին ոգին հիմնաւորուի Հ.Մ.Ը.Մ-ի բուն սկզբունքներուն վրայ, նամակներ կը գրուին «Եգիպտոս, Պուլկարիա, Ռումանիա՝ քոյր շրջաններուն խնդրելով անոնցմէ շրջանային ներքին կանոնագիրերէն մէկ մէկ նմոյշ» բաղղատել կազմուելիք ծրագիր-կանոնագիրին հետ:

1933-ի գարնան վերջաւորութեան, Ֆուլթայոյի խաղերու փակումին, Հ.Մ.Ը.Մ-ի կեանքը կը ճոխանայ գեղեցիկ յաղթանակով մը, որ կը տանի Դամասկոսի խումբը Տէ. Աշ. Փէ-ի դաշտին վրայ, նոր խումբին դէմ խաղալով:

...«Ջերմապէս շնորհաւորելի են Դամասկոսի խումբին 11 խաղացողները... որ թափանցած են խաղին բոլոր նրբութիւններուն եւ գիտեն բոլորը միասին եւ բոլորին համագործակցութեամբ տանիլ յաղթանակը» («Ազդակ», 25 Մայիս 1933): Միւս կողմէ, Ֆետերասիոնին կազմակերպած Բուփ շալանթ տիւ Լըվանի վերջին մրցումին Տէ. Աշ. Փէ. եւ Հ.Մ.Ը.Մ. Պէյրուսի հաւասար արդիւնքով դաշտէն դուրս կու գան:

«Ֆուլթայոյի խաղերուն զուգընթաց Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, գլխաւորաբար Պէյրուսի եւ Հալէպ, դաշտ կ'իջեցնեն իրենց մարզիկները ողիմպիական խաղերու համար:

«Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղի 6-րդ ողիմպիականը տեղի կ'ունենայ Յունիս 18-ին, Ֆրանսական դաշտին վրայ, Ռաս Պէյրուսի մասնակցութեամբ 50-է աւելի մարզիկներու, կը տողանցեն առաջնորդութեամբ «Բնար» նուագախումբին: Օրուան ախոյեան կը հանդիսանայ Յ. Գատեան:

«Այս առթիւ նշել տանք, թէ Երջանային Վարչութիւնը կը մտածէ յառաջիկայ աշնան, երբ բոլոր մասնաճիւղերն ալ իրենց ողիմպիականները կատարած կ'ըլլան, սարքել Սուրիոյ



1935. չափական մարզանք՝ միջ-մասնաճիւղային դաշտահանդէսի ժամանակ:



1935. Հ.Մ.Ը.Մ.ի Արաբուճարի ֆուտբոլի խումբը

եւ Լիբանանի մէջ առաջին միջ-մասնաճիւղային ողիմպիականը, որուն եթէ բոլոր մասնաճիւղերն ալ հնարաւորութիւն չունենան մասնակցելու, Հալէպ, Պէյրութ, Դամասկոս կը կարծենք թէ ի վիճակի են իրենց մարզիկներով նախաքայլը առնելու ընդհանուր ողիմպիականին, ինչ որ միջ-մասնաճիւղային ֆուտբոլի ախոյեանական մրցումները իրականացնելէն ու յարատեւելէն ետք, երկրորդ եւ անհրաժեշտ գործն է Շրջանային Վարչութեան իրականացնել նաեւ միջ-մասնաճիւղային ողիմպիական մրցումները («Ազդակ», թիւ 903, 3. Շ.):

Լաթաքիոյ մասնաճիւղը ներքին տագնապ մը կ'ապրի: Մէկ կողմէ միութեան հեռացած քանի մը տղաք «Տաւրոս անունով ֆուտբոլի խումբ մը կազմեր են», միւս կողմէ «Դպրոցն ալ սկսեր է սկսուտներ հագուեցնել, բան մը որ կրնայ դժուարութեան մատնել իրենց նոր սկսած սկսուտ շարժումը»: Կար նաեւ միութեան շարքերէն «Երկու անդամներու հակակարգապահական ընթացքը եւ կ'առաջարկէ արտաքսել գանոնք»:

«Լաթաքիոյ խնդիրները մօտէն քննելու եւ որոշում կայացնելու համար, պարտականութիւն յանձնուեցաւ Սիմոն Թերճանեանին Լաթաքիա երթալու» (Ատենագրութիւն, 1 Յունիս 1933):

Չատկուան միջ-մասնաճիւղային ախոյեանական մրցումներուն, Հալէպի մէջ, երկրորդ դասի խումբերու խաղին արդիւնքը՝ Ալեքսանտրէթ Անտիոք հաւասար աւարտականի մնացեր էին, այժմ կը գրեն Շրջանային Վարչութեան՝ Անտիոքէն, որ պատրաստ են այդ մրցումը Ալեքսանտրէթի մէջ կատարելու: Միեւնոյն ատեն կը հաղորդեն, որ աշխատանքի մէջ են կառավարութեան վաւերացման ենթարկելու մասնաճիւղը, երբ իրենց ձեռքին ունենան Փրանսերէնի թարգմանուած ծրագիր-կանոնագրի պատճէնը:

Շրջանային Վարչութիւնը, Պատգամաւորական ժողովի առնչութեամբ, «յետ երկար խորհրդակցութեան, յարմար նկատեց որ այս տարի եւս այդ ժողովը, գումարուի Պէյրութի մէջ, Յունիս 2-ին: Որոշուեցաւ շրջաբերականով հաղորդել մասնաճիւղերուն» (Ատենագր. 9 Յունիս 1933):

1933 Յունիս 11-ի Կիրակին, Դամասկոսի Հ.Մ.Ը.Մ.ի խումբը դարձեալ գեղեցիկ էջ մը կը բանայ կազմակերպութեան կեանքին մէջ: Միութեան Դամասկոսի դաշտին վրայ, «Եղանակի ամէնէն հետաքրքրական եւ հաճելի մրցումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի եւ Ամմանի անգլիացի զինուորներուն միջեւ, հովանաւորութեամբ Սուպհի պէկ Պէրէքէթի: Ներկայ էին Անգլիոյ հիւպատոսը, ուրիշ ծանօթ բարձրաստիճան անձնաւորութիւններ եւ խուռներամ բազմութիւն... Եղանակի ամէնէն խանդավառ եւ կատաղի խաղերէն» մէկը կ'որակուի այս մրցումը, որ կը վերջանայ Հ.Մ.Ը.Մ.ի փառաւոր յաղթանակով:

Խաղերէն ետք, անգլիական խումբը կը հիւրասիրուի վարչութեան ատենապետ Վահան Տօնապետեանի տունը թէյ յասեղանով, «Խանդավառ ու հաճելի մթնոլորտի մը մէջ յաջողութեան մաղթանքներ եղան երկուստեք, որ անգլիացիներու խումբին վարիչը չափազանց գոհ մերիններուն ցոյց տուած մաքուր եւ վարպետ խաղարկութենէն, հրաւիրեց զիրենք Ամման փոխ վրէժի մրցումի, որուն համար ըլլալիք ծախսերը ինք խոստացաւ վճարել, ինչ որ երկար ծափերով ընդունուեցաւ» («Ազդակ», 16 Յունիս 1933):

Հալէպի մէջ, միւս կողմէ, տակաւին կը շարունակուին Սելլում բաժակի մրցումները: Իսկ տարեկան ողիմպիականի համար պատրաստութիւններ կը տեսնուին:

Հալէպի Սկսուտական Խորհուրդը 22 Յունիս 1933-ի իր նիստին, գործերու դիւրութեան եւ սկսուտական շարժման զարկ տալու մտօք, շրջանը կը բաժնէ երեք շրջաններու. «Քաղաք, Նոր Գիւղ, Արիանիներու քէմփ»: Քաղաքի պատասխանատուներ կը նշանակուին Լեւոն Պայրամեան, Արսէն Դանիէլեան. Նոր Գիւղ՝ Պետրոս Թաքելեան, Յակոբ Զրրծիեան, Նորայր Տիւպէրեան. Արիանիներու քէմփ՝ Զոհրապ Տէր Ղազարեան, Եղուարդ Զէմճէմեան, Եղուարդ Կիրակոսեան եւ Արսէն Ղուկասեան:

Սկսուտական զարգացման փուլերուն աւելի մօտէն հետեւելու համար, շրջաններու բաժանումէն ետք, կեդրոն ունենալով միշտ քաղաքը, տասնապետական պարտաւորիչ ժողովի ղրութիւնը անկասկած որ իր դրական արդիւնքը պիտի տար: 1933-ի սկիզբները կազմուած տասնապետական կանոնաւոր ժողովներու ատենագրութիւնը ցոյց կու տայ արդէն թափուած ճիգին չափը: Այս ժողովին կը մասնակցին 3-րդ խմբակի տասնապետ Յարութիւն Տէր Ղազարեան, 5-րդ խմբակի տասնապետ Փ. Տէր Ղազարեան, 6-րդ խմբակ՝ Երջանիկ Տնկիկեան, 7-րդ՝ Գէորգ Չաղլասեան եւ Նշան Թիւյսիւզեան որպէս շրջանի ընդհանուր խմբապետի հանգամանքով: Քաղաքի մը տուած ըլլալու համար տասնապետական ժողովի աշխատանքներուն մասին, իրենց ատենագրութեանէն կը քաղենք հետեւեալը: Տասնմէկերորդ նիստի օրակարգի եօթը խնդիրներէն մէկն է գարնանային դասացուցակը:

«5-րդ խումբը պտոյտի գնաց մէկ բացակայով:

«6-րդ խումբը եկեղեցի գնաց:

«7-րդ խումբը մաքրութեան հսկեց ու Շաբաթ օրը, ամսոյս 1-ին, իրիկունը ուրախութիւն եղաւ մինչեւ ժամը 11. եղան արտասանութիւններ, կատակերգութիւններ եւ նուագ:

«Որոշուեցաւ ընդհանուր մարզանք ընել Հինգշաբթի եւ Կիրակի օրերը: Այս օրերէն առաջ, տասնապետական խորհուրդը պիտի որոշէ իւրաքանչիւր խմբակի մարզանքէ վերջ կատարելի դրօշախօսութեան եւ ակնկէտի խաղերու դասաւորման հարցը: Հինգշաբթի օրուան դասախօսութիւնները դադարեցուցան գարնան առթիւ:

«Այս Հինգշաբթի, Ա. խումբը պիտի կատարէ ակնկէտի դմբ փորձեր՝ վազք 100 մ., դրօշարշաւ եւ մէկ քայլ ուսում: Բ. խումբը՝ այս Կիրակի դրօշախօսութեան փորձեր պիտի ընէ: Գ. խումբը՝ դրօշախօսութիւն, իսկ Դ. խումբը ակնկէտի դմբ՝ վազք 100 մ., դրօշարշաւ եւ 1 քայլ ուսում: Բոլոր սկաուտներուն բժշկական քննութիւն:

«Ամէն մէկ տղայ որ երկու շաբթուան մէջ բացակայ չունենայ մէկ բարենիշ պիտի ստանայ: Բարենիշները պիտի ըլլան երեք գոյներով՝ կարմիր, կապոյտ, նարնջագոյն: Այս բարենիշներու թուական արժէքին համաձայն սկաուտական աստիճան կամ մասնագիտական վկայական կը տրուին ստացողին:

Սկաուտական շարժման աւելի զարկ տալու համար, Շրջանային Վարչութիւնը, Սուրիոյ եւ Լիբանանի շրջանի

ընդհանուր սկաուտ խմբապետ Սիմոն Թերճանեանը կը ղրկէ նախ Լաթաքիա ծանօթ խնդիրներու կարգադրութեան համար եւ ապա՝ Հալէպ:

Ծանօթ մարզիչ Լեւոն Աբգարեան Կիպրոսէն փափաք կը յայտնէ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ գործելու: «Շրջ. Վարչութիւնը օրակարգի նիւթ ըրաւ իր առաջարկը եւ որոշեց Պատգամաւորական Ժողովին տանիլ, ու եթէ Պատգամաւորական Ժողովը կ'ապահովէ անոր նիւթականը, այն ատեն լաւ, ապա թէ ոչ աշխատիլ վարժարանի մը մէջ տեղ գտնել ու բերել տալ» (Ատենագրութիւն, 23 Յունիս 1933):

(Շար. 9)

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Վահրամ Դանիէլեանի մահուան առիթով՝
- Եղբ. Յարութիւն, Ազնիւ եւ Մանուկ Չիլինկիրեաններ (Ֆլորիտա) \$ 250
- Եղբ. տղթ. Պետրոս եւ Թագուհի Պաքըրճեան (Նիւ Եորք) \$ 200
- Եղբ. Վարուժան եւ Անի Սերոբեան (Մոնթրէալ) \$ 100
- Տէր եւ Տիկ. Յրաչ Տէր Սարգիսեան (Մոնթրէալ) \$ 100
- Գարմէն Տէր Կարապետեան (Lnu Անձելլա) \$ 100

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL




PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



33 ՏԱՐԻ ԵՒ ԱՆԴԻՆ

**Տոքթ. Շահե Ենիգոնջեան
ԼՈՍ ԿԱԹՈՍ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ**

Ուրախութեամբ ստացայ «Մարզիկ» պաշտօնաթերթի 2013 տարւան վերջին թիւը՝ 9 (375):

Գիտնալով, որ մօտ օրէն «Մարզիկ»ը, տպագիր իր ներկայ դրութեան կողքին, մեր հասարակութեան մատչելի պիտի դառնայ նաեւ նոր կայք էջով, փորձեցի ձերբագատել ենթակայական զգացումներս եւ վայրկեանուան մը համար «Մարզիկ» պաշտօնաթերթը թղթատել որպէս «օտար», ոչ յանձնառու կամ շահագրգիռ Հ.Մ.Ը.Մ.ական: Նաեւ ուզեցի բաղդատել ներկայի թիւը սկզբնական օրերու թիւերուն հետ:

Իր քառասուն էջերով «Մարզիկ»ը գտայ գրաւիչ, գեղեցիկ եւ քաջողական կողքով, մաքուր եւ հաղորդական նկարներով եւ հեզասահ ու պարզ ձեւաւորումով: Բովանդակութիւնը ճոխ եւ դիւրամատչելի է: Յստակ է, թէ «Մարզիկ»ը Հ.Մ.Ը.Մ.ի հայելին է եւ անոր համագաղութային կառոյց ըլլալուն ապացոյցը: Իր խմբագրական էջով անիկա գաղափարախօսութիւն եւ Հ.Մ.Ը.Մ.ական արժէքները կը սփռէ: «Անդրադարձ» եւ «Դէմքերու հետ» բաժիններով, Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին մէջ ներդրում ունեցած անհատներու ընդմէջէն, նոր Հ.Մ.Ը.Մ.ական անդամներու եւ հայ հասարակութեան պատմական կարեւոր իրողութիւններ կը փոխանցէ: Եւ մանաւանդ «Մասնաճիւղէ մասնաճիւղ» խորագիրին տակ զանազան գաղութներու, շրջաններու եւ մասնաճիւղերու գործունէութիւնը, հիմնական աշխատանքները եւ յաջողութիւնները

լուսարձակի տակ կ'առնէ:

Երեսուներեք տարիներու ընթացքին չեմ նկատած բարոյական, գաղափարական կամ դաստիարակչական որեւէ նահանջ: Ընդհակառակը, կը նկատեմ, թէ խմբագիր Վիգէն Աւագեանն ու խմբագրական կազմը կարողացած են «Մարզիկ»ի նպատակակէտը պահել այն, ինչ որ էր 1980-ին, երբ նախատեսուած էր, Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը արտայայտելով, ազգային առողջ նկարագիր եւ միութենական աւանդութիւններ սփռել: Յատկանշականը այն է, թէ տարիներու ընթացքին «Մարզիկ» դարձած է ընթերցողին աւելի մատչելի եւ պատանի-երիտասարդներու ճաշակին առաւել հաղորդակից: Գաղափարախօսութեան ջանքերը ըլլալու կողքին անիկա առիթ կ'ընծայէ կարծիքներու փոխանակման: Նոյնպէս, հրատարակութեան որակը հսկայական յառաջդիմութիւն արձանագրած է, թէ՛ էջադրումը, եւ թէ՛ գրաշարական ձեւաւորումները աւելի պարզ եւ հաղորդական դարձած են: Թուղթի եւ գոյներու որակը եւ մանաւանդ նկարներու ճոխութիւնը «Մարզիկ»ը շատ աւելի գրաւիչ դարձուցած են, աւելի համընթաց պատանի-երիտասարդներու ճաշակին:

Ուրախ եմ «Մարզիկ»ի երեսուներեք տարիներու ձգած ժառանգութեամբ: Կը գնահատեմ պաշտօնաթերթին խմբագիրը եւ խմբագրական ու վարչական կազմերը իրենց զնահատելի աշխատանքին համար: Խանդավառ եմ անմիջական ապագայով, 2014 թուին, ամսաթերթի կողքին շուտով տեսնելու այժմէական տուայներով օժտուած «Մարզիկ»ի կայքէջը՝ www.marzig.net



2013-ը նշեց
Հ.Մ.Ը.Մ.ի Լոս
Անճելըսի մասնաճիւղին 45-ամեակը: Այս առիթով

պէտք ունեցաւ մեծաշուք փոխախրութիւն: Մասնաճիւղը ոգեկոչեց իր փայլուն անցեայր եւ յուսալու ներկան, նաեւ չմոռցաւ պայծառ գալիքին փարոս հանդիսացող այն Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք անցնող 45 տարիներուն անմնացորդ կերպով ծառայեցին մասնաճիւղին ու անցան-գացին՝ դառնալով յուշ եւ յիշատակ:

45-ամեայ յոբելեանին նուիրուած իր յայտուկ հրատարակութեան մէջ, մասնաճիւղը ներկայացուց անփոփ թնութագիրները 15 եղբայրներու, որոնց փաստակաշար անցեայր գօտեպնդիչ օրինակ կը հանդիսանայ այսօրուան եւ վաղուան Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Կողքի էջերով կը ներկայացնենք յիշեալ եղբայրներուն նուիրուած կենսագրական գիծերը:

**ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
10-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ
ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԶՄԸ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ**

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ բանակումի Ընդհանուր Խմբապետ նշանակուած է եղբ. Վաչէ Նաճարեան Լիբանանէն, փոխ խմբապետուի՝ քոյր Ալին Պաղտասարեան Արեւելեան Միացեալ Նահանգներէն, փոխ խմբապետ՝ եղբ. Ռոմանոս Պետրոսեան Հայաստանէն:

ԱՆՄՆԱՅՈՐԳ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՕՏԵՊՆԴԻՉ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ
45-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՐԱԽՏԱԻՈՐՆԵՐԸ)



**ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՆ
ԲԱՐՍԵՂԵԱՆ**

Եղբ. Յարութին Բարսեղեան եղած է Հայէպի առաջին ըսկառուներէն: Իր հետեւողական աշխատանքով ան հասած է խմբապետի աստիճանին եւ դարձած է հիմնադիր՝ մասնաճիւղի երէց փաղանգին:

1960-ական թուականներուն, Միացեալ Նահանգներու

Արեւմտեան շրջան փոխադրուելով, եղբ. Բարսեղեան լուրջ աշխատանք տարած է Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղ մը հիմնելու Լոս Անճելըսի մէջ: Աշխատանքը իրականացուցած է հաւատաւոր խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ականներու գործօն մասնակցութեամբ: Այսպէս՝ եղբայրը.-

- 1968-ին եղած է նորաստեղծ մասնաճիւղի հիմնադիր ատենապետը:
 - 1972-ին գլխաւորած է նորաստեղծ մասնաճիւղին մարզական եւ սկառուտական պատուիրակութիւնը, մասնակցելով Մերձաւոր Արեւելքի 35-րդ միջ-մասնաճիւղային մրցումներուն:
 - Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերու յաղթանակի առաջին պարահանդէսի կազմակերպիչ մարմնի պատասխանատուն էր:
 - 1987-ին մասնակցած է Աթէնքի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Գ. Ընդհանուր ժողովին:
 - 1990-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղը զնահատելով եղբոր երկար տարիներու ծառայութիւնը մասնաճիւղէն ներս, յատուկ յուշանուէրով մը պարգեւատրած է զինք:
 - 1995-ին, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ արժանացած է տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» տիտղոսին:
- Միաժամանակ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ան պարգեւատրուած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:
- Իր անձնական փորձառութիւնները երբեք չէ զյացած փոխանցելու Հ.Մ.Ը.Մ.ական իր շրջապատին:
 - 15 անգամ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի վար-

չութեան մաս կազմած է, գլխաւորաբար ստանձնելով ատենապետի դժուարին պարտականութիւնը:

Վերջին անգամ, եղբ. Բարսեղեան պարգեւատրուեցաւ 2008-ին, մասնաճիւղի 40-ամեակի ձեռնարկին ընթացքին, անսահման ուրախութեան միջնորդութեամբ մը ապրելով:

Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութենէն մինչեւ իր մահը, եղբ. Բարսեղեան աշխարհութեամբ հետեւած է մասնաճիւղի եւ ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն եւ նոյնիսկ յառաջացած տարիքին փորձած է գործօն մասնակցութիւն բերել անոնց յաջողութեան:



ԵՂԲ. ՔԵՐՈՒ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Եղբ. Քերոս Առաքելեան ծնած է 1909-ին, Այնթապ: 1914-ին, ընտանիքին հետ հաստատուած է Հայէպ, Սուրիա: 1918-ին, վերադարձած է Ատանա: Նոյն տարին եղած է Հայ Արիներու սկառուտական խումբի առաջին անդամներէն: Միայն թրքերէն խօսակցական լեզուն իմացող եղբ.


Առաքելեան միայն տարի մը բախտաւորութիւնը կ'ունենայ դպրոց յաճախելու եւ հայերէն լեզուին ծանօթանալու: Քեմալական շարժման ընթացքին կը փոխադրուի Գոքինիա, Յունաստան: 6 ամիս առաւօտեան դպրոց յաճախելով եւ կօշիկ ներկելով ընտանիքին կ'օգնէ: Ապա, կը նետուի կեանքի ասպարէզ, մասնագիտանալով ատաղձագործութեան մէջ:

1922-ին, ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ական Մամուլեանի հետ կը հիմնէ Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղը, որուն առաջին սկառուտներէն կ'ըլլայ: 1924-ին, սկառուտականի կողքին, մասնաճիւղին ֆութպոլի խումբին կը միանայ, դառնալով անոր խմբապետը:

1930-ին, ընտանիքին հետ կը փոխադրուի Մեքսիքո եւ կը միանայ երկրի ֆութպոլի խումբին, եւ մինչեւ 1939 կը դառնայ անոր փայլուն աստղերէն մէկը: Միաժամանակ, ան կը սկսի խաղալիքի առուծախով զբաղիլ եւ մեծ յաջողութիւններու հասնիլ:

1964-ին կը փոխադրուի Միացեալ Նահանգներ: 1968-ին մեծապէս կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան եւ բարգաւաճման աշխատանքներուն: Երկար տարիներ կ'ընտրուի վարչական եւ քանիցս կը վարէ ատենապետի պաշտօնը: Ան մեծ ներդրում կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթեպելլոյի մասնաճիւղի հիմնադրութեան:

1976-1981, եղբ. Առաքելեան յաջորդական երկու շրջան եղած է Շրջանային Վարչութեան ատենապետ: 1979-ին մասնակցած է Կիպրոսի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական Բ. Ընդհանուր Ժողովին: 1981-ին ստանձնած է Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան Զ. Մարգախաղերու պատուոյ նախագահութիւնը: 1982-ին արժանացած է Հ.Մ.Ը.Մ-ի «Արժանեաց» շքանշանին, 1988-ին՝ Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ՝ «Կիլիկեան Ասպետ» շքանշանին: 1993-ին ստանձնած է Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 18-րդ մարգախաղերուն պատուոյ նախագահութիւնը եւ այդ առիթով հիմնած է Հ.Մ.Ը.Մ-ի «Առաքելեան» հիմնադրամը:



ԵՂԲ. ՅԱԿՈՒՅՈՎԱՅԵԱՆ

Եղբ. Յակոբ Օվայեան ծնած է 1939-ին: Սանճաքի պարպումէն ետք ընտանիքին հետ փոխադրուած է Հալէպ, Սուրիա: Նոյն տարին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղին, իբրեւ գայիկ: Այնուհետեւ երկար տարիներ ծառայած է Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն, իբրեւ սկաուտ,

խմբապետ, մարզիկ, Սկաուտական Խորհուրդի եւ վարչական կազմերու անդամ: 1961-ին ընտանեօք փոխադրուած է Պէյրութ, Լիբանան եւ փոխանցուած է Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղ, ստանձնելով պատասխանատու պաշտօններ:

1974-ին, ընտանիքին հետ վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըս: Նոյն տարին ան ընտրուած է Արեւմտեան Մ. Նահանգներու առաջին Շրջանային Վարչութեան անդամ եւ ստանձնած է ատենապետի պաշտօնը: Այնուհետեւ, մինչեւ 1984, ան մաս կազմած է Շրջանային Վարչութեան յաջորդական կազմերու:

1976-ին, Հ.Մ.Ը.Մ-ական կարգ մը եղբայրներու հետ նախաձեռնած է Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան մարգախաղերուն, որոնք մինչեւ օրս մեծ ժողովրդականութիւն կը վայելեն շրջանին մէջ:

Եղբայրը մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի բազմաթիւ Շրջանային Ժողովներուն, իսկ 1983-ին՝ Հ.Մ.Ը.Մ-ի Գ. Ընդհանուր Ժողովին, Աթէնք, Յունաստան: 1985-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 10-րդ մարգախաղերուն առիթով, Շրջանային Վարչութիւնը յուշանուէրով մը պատուած է զինք: 1987-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչութիւնը եւ Լոս Անճելըսի քաղաքապետութիւնը բարձր գնահատելով եղբոր

միութենական բեղուն գործունէութիւնը, յատուկ գնահատագիրներով պարգեւատրած են զինք:

Եղբ. Օվայեան մեծ դերակատարութիւն ունեցած է Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարգախաղերու (ՔԱՀԱՄ-ի) կազմակերպման մէջ: Հ.Մ.Ը.Մ-ի 80-ամեակին զուգարկապող Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 23-րդ մարգախաղերուն առիթով, օրուան Շրջանային Վարչութիւնը «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» ի տիտղոսը շնորհած է եղբօր:

Հոկտեմբեր 2004-ին, եղբայրը պարգեւատրուած է շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Ծառայութեան» շքանշանով:



ԵՂԲ. ԶԵՄԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Եղբ. Զեմիլ Սարգիսեան ծնած է Հալէպ, Սուրիա, ընտանեկան համեստ յարկի մը տակ: Փոքր տարիքէն անդամակցած է ծննդավայրի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղին եւ եղած է անոր փոքրաթիւ սկաուտական խումբի այն անդամներէն, որոնք կեանքի դժուարին պայմանները անտեսելով,

տքնաջան աշխատանք տարած ու խտացուցած են անոր շարքերը, հետագային քաջաբար կազմակերպելով բոլորին ծանօթ Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի միջ-մասնաճիւղային մարգախաղերը եւ աննախընթաց չքերթը առաջնորդող շեփորախումբը:


Հայ հասարակական կեանքէն ներս իգական սեռին ներկայութիւնը կարեւոր նկատելով, եղբ. Սարգիսեան կազմակերպչական մեծ աշխատանք տարած է ստեղծելու Հալէպի արեւուշական առաջին խումբը: Իր շրջապատին վստահութիւնը շահելով, ան նոյնիսկ կազմակերպած է Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի արեւոյշներու առաջին բանակումը:

Սկաուտականին առընթեր, եղբայրը եղած է Ֆութպոլի սիրահար, Հալէպի առաջին խումբի լաւագոյն մարզիկ, հմուտ եւ պատասխանատու մարզիչ եւ արդարադատ իրաւարար: Ան երկար տարիներ եղած է Սուրիոյ Ֆութպոլի ախոյեանութեան իրաւարար:

1968-ին ընտանիքին հետ Լոս Անճելըս հաստատուելով, մեծ անձնագոհութեամբ ծառայած է Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի նորաստեղծ մասնաճիւղին:

1984-ին, պարգեւատրուած է իբրեւ արժանաւոր վեթերան Հ.Մ.Ը.Մ-ական: Ան մեծ ներդրում ունեցած է Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան մարգախաղերու կազմակերպման առաջին քայլերուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղի հիմնադրութեան: Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնը գնահատելով եղբօր ազգանուէր գործը, հայու տիպարը եւ անսակարկ աշխատանքը, 1993-ին անոր պարգեւած է «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» տիտղոսը:

Եղբայրը կեանքին հրաժեշտ տուաւ 1993-ին, միութենական մաքուր ոգի ժառանգելով իր շրջապատին:



ԵՂԲ. ՃԱՔ ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Եղբ. Ճաք Տէր Պօղոսեան ծնած է 1920-ին, Տէօրթեօլ, Կիլիկիա, այնթապցի ընտանեկան համեստ յարկի մը տակ: Դպրոցական կրթութիւնը իսկէնտէրունի Կաթողիկէ Եղբայրներու Գոլէճը ստացած ըլլալով, եօթը տարեկանին անդամակցած է նոյն գոլէճի Ֆրանսական սկաու-

տական շարժումին, նախ իբրեւ գայլիկ, ապա՝ 1934-ին փոխանցուած է սկաուտական շարքեր:


Կիլիկիոյ պարպումէն ետք, 1939-ին, եղբ. Տէր Պօղոսեան ընտանիքին հետ փոխադրուած է Պէյրութ, Լիբանան: Ան միշտ սիրած է արուեստը եւ եղած է մասնագէտ նկարիչ: 1955-ին աշխատած է Շիքակոյի «Wepster Chicago» ձայնագրութեան ընկերութեան մէջ:

1956-ին, վերջնականապէս հաստատուած է Լոս Անճելըս: 1968-ին կարգ մը հայրողիներու հետ հիմնած է Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղը:

Եղբայրը պահապան հրեշտակի նման հետեւած է սկաուտական աշխատանքներու զարգացման: Բազմիցս ընտրուած է նորաստեղծ մասնաճիւղի վարչութեան անդամ եւ վարած է պատասխանատու պաշտօններ: Եղբայրը մեծ դեր ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի, Սան Ֆրանսիսքոյի եւ Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղերու հիմնադրութեան մէջ:

Միութենական իր կեանքին առընթեր, ան ունեցած է դերասանական փայլուն կարողութիւններ եւ կարեւոր դերեր ստանձնած է «Երջանկութեան Արցունքները», «Սասնոյ Զաւակներ» եւ «Պաղտասար Աղբարը» ֆիլմերուն մէջ: Արուեստագէտի իր արժանիքներուն շնորհիւ, Հ.Մ.Ը.Մ.ի արխիւները հարուստ են եղբօր լուսանկարներով եւ տեսերիզներով:

Եղբօր միութենական անսակարկ նուիրումը գնահատուած է բազմիցս: Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղը զինք պարգեւատրած է իբրեւ մասնաճիւղի «Օրինակելի միութենական», իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային Վարչութիւնը 1997-ին «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսը շնորհած է իրեն:



ԵՂԲ. ՆԻԿՈԼ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Եղբ. Նիկոլ Արզումանեան ծնած է Պէյրութ, Լիբանան: Փոքր տարիքին, ընտանիքին հետ փոխադրուած է Պաղտատ, Իրաք, ուր անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին, իբրեւ թեթեւ ատլէթի մար-

զիկ: Աւելի ուշ կեդրոնացած է պասքեթպոլի մարզաճիւղին վրայ:

Բազմաթիւ պատասխանատու պաշտօններ ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղէն ներս: Ընտրուած է վարչական, եղած է մարզական պատասխանատու եւ հիմը դրած է մասնաճիւղի վոլիպոլի աղջկանց խումբին:


1971-ին, եղբ. Արզումանեան ընտանիքին հետ փոխադրուած է Միացեալ Նահանգներ եւ նոյն տարին ընտանեօք անդամակցած են Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին: Բեղուն գործունէութիւն ցուցաբերած է մասնաճիւղին ընկերային, սկաուտական եւ յատկապէս մարզական կեանքէն ներս, չրջանի երիտասարդութիւնը համախմբելով Հ.Մ.Ը.Մ.ի Ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերէն ներս, ի հարկին ստեղծելով համապատասխան նոր խումբեր:

Բազմաթիւ տարիներ վարչական ընտրուելով, ան ստանձնած է մարզական բաժանմունքի եւ յատկապէս պասքեթպոլի բաժանմունքի եւ գանձնապահի պատասխանատուութիւնները: Նաեւ բազմիցս մասնակցած է չրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն ժողովին: Նշանակուած է Երջանային Մարզական Խորհուրդի անդամ:

Եղբայր Արզումանեան սիրով կատարած է իրեն վստահուած բոլոր պարտականութիւնները եւ պարգեւատրուած է բազմիցս:

1998-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի 30-ամեակին առիթով Երջանային Վարչութեան կողմէ արժանացած է չրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն՝ «Մառայութեան» շքանշանին:

2004-ին, «Մարզիկ» պաշտօնաթերթի 25-ամեակին առիթով, ան Կեդրոնական Վարչութեան կողմէ յատուկ գնահատանքի արժանացած է պաշտօնաթերթի վարչական աշխատանքներուն իր ունեցած մեծ նպաստին համար:



ԵՂԲ. ՄԻՔԱՅԷԼ ԵՄԷՆԻՃԵԱՆ

Եղբ. Միքայէլ Եմէնիճեան ծնած է 1928-ին, Յունաստան, ընտանեկան համեստ յարկի մը տակ: Յաճախած է Աթէնքի Զաւարեան Ազգային նախակրթարանը, ապա՝ տեղւոյն Կաթողիկէ վարժարանը: Հակառակ պատերազմի տնտեսական ահաւոր դժուարութիւններուն, եղբ. Եմէնիճեան գործունեայ անդամ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղի սկաուտական բաժանմունքէն ներս, նախ իբրեւ սկաուտ, ապա՝ սկաուտ խմբապետ:

1949-ին, մօր ու եղբօր հետ գաղթած է Արժանթին: Արժանթինի մէջ ան հանդիպած է իր կողակիցին՝ Օլկային, որուն հետ ամուսնացած է 1953-ին եւ ապագային բախտաւորուած է երկու գաւազով՝ Մոնիքա եւ Ալէքս:

Կնոջ՝ Օլկային օգնութեամբ, մեծ զոհողութիւններով եւ երկար ժամեր աշխատելով, եղբ. Եմէնիճեան եղած է յաջող գործատէր եւ սեփականատէր՝ Արժանթինի կօշիկի արտադրութեան հանրածանօթ գործարաններէն մէկուն:

Միաժամանակ, ան շարունակած է Հ.Մ.Ը.Մ-ականի իր գործունէութիւնը Արժանթինի մէջ եւ եղած է Պուէնոս Այրէսի մասնաճիւղի հիմնադիրներէն մէկը եւ սկսուտ խմբապետը:

Հակառակ անոր որ ան յաջողած է իր ընտանիքին բարեկեցիկ կեանք մը ապահովել, սակայն Արժանթինի քաղաքական կացութեան եւ տնտեսական ապագայով մտահոգ՝ 1968-ի ամրան ընտանիքին հետ ան հաստատուած է Լոս Անճելըս:

Շարունակելով իր Հ.Մ.Ը.Մ-ականի գործունէութիւնը, ան դարձած է Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադիր անդամներէն մէկը եւ անոր սկսուտապետը:



ԵՂԲ. ԶՈՐՃ ՊԱՂՏՈՅԵԱՆ

Ապրիլ 1979-ին, Լոս Անճելըսի հայութիւնը եւ մասնաւորաբար Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը հողին յանձնեցին եղբայր Զորճ Պաղտոյեանը, որ դեռ չէր բոլորած իր կեանքին 30-ամեակը:

Ան անդրանիկ զաւակն էր Գրիգոր եւ Կլատիս Պաղտոյեաններու: Ծնած էր 1951-ին, Պէյրուսի, Լիբանան: Յաճախած էր տեղւոյն Հայ Աւետարանական Վարժարանը, ապա՝ Յովակիմեան Մանուկեան Վարժարանը:

Փոքր տարիքէն ծնողքը զինք առաջնորդած է միանալու Հ.Մ.Ը.Մ-ին: Եղած է սկսուտ, մարզիկ, մարզիչ եւ ապա՝ վարչական անդամ: Ան իր արտադրողական բոլոր ժամերը անցուցած է Հ.Մ.Ը.Մ-ի շրջանակին մէջ:

1971-ին, ծնողքին եւ քրոջը՝ Անիին հետ հաստատուած է Լոս Անճելըս: Նոյն տարին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղին եւ ցուցաբերած է աշխոյժ գործունէութիւն: Ան մեծ ներդրում ունեցած է Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային առաջին մարզախաղերուն եւ աւանդական տողանցքին կազմակերպման մէջ:

Եղբ. Զորճ Պաղտոյեան ազնիւ, դիւրահաղորդ եւ կատակասէր անձ մըն էր: Գիտակից էր ազգային պարտականութեան եւ հաւատարիմ իր միութեան «Բարձրացի՛ր-բարձրացուր» կարգախօսին: Կը հաւատար միութենական կեանքին եւ մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ի վսեմ առաքելութեան:

րուն, որոնք Հայկական Յեղապանութենէն հրաշքով ազատած, գաղթականի ցուպը ձեռքին, Սուրիոյ դաժան անապատներէն անցնելով հաստատուած էին Հալէպ, Սուրիա:

Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի մասնաճիւղին եւ իր մասնակցութիւնը բերած է անոր զարգացման աշխատանքներուն:

1955-ին, ամուսնացած է Ազնիւ Սապունճեանին հետ, որուն ծանօթացած է Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը:

1964-ին, երիտասարդ այս զոյգը փոխադրուած է Միացեալ Նահանգներու Լոս Անճելըս քաղաքը, ուր մասնակից դարձած է Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղին հիմնադրութեան ազգանուէր աշխատանքներուն, իր անսակարկ մասնակցութիւնը բերելով անոր հզօրացման եւ յատկապէս սկսուտական շարքերու խտացման:

Եղբ. Սապունճեան աշխատանքի բերումով երկար տարիներ ապրած է Սան Տիէկօ քաղաքը, ուր իր օգտակար մասնակցութիւնը բերած է քաղաքի հայկական կեանքի կազմակերպման:

Ափսո՛ս, որ անողոք հիւանդութիւնը առիթ չընծայեց եղբոր շարունակելու ազգային եւ միութենական իր գործունէութիւնը:

Երկար տարիներ անկողինին ծառայելէ ետք, ան իր աչքերը ընդմիշտ փակեց 7 Դեկտեմբեր 2004-ին, առանց իրականացնելու իր կեանքի կարեւորագոյն տենչանքը, որն էր հաստատուելի հայրենի հողին վրայ եւ հոն ապրիլ իր կեանքին վերջալոյսը:



ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ՇԽՐՏԸՄԵԱՆ

Եղբ. Կարպիս Շխրտըմեան Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղին անդամակցած է 1978-ին: Նոյն տարին եւ յաջորդող երեք տարիներուն ան նշանակուած է մասնաճիւղի Սկսուտական Խորհուրդի ատենապետ: 1981-1984 եղած է վարչական եւ վարած է ատենադպիրի եւ ատենապետի պաշտօններ:

1984-1988, յաջորդական երկու շրջան, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ վարած է ատենադպիրի պաշտօն:

1996-1998 նշանակուած է Նաւասարդեան կազմակերպիչ յանձնախումբի ատենադպիր: 1988-2002 մաս կազմած է Շրջանային դաստիարակչական յանձնախումբին, իբրեւ

ԵՂԲ. ՍԵՐՈՒՄ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ

Եղբ. Սերոբ Սապունճեան ծնած է 1920-ին, Այնթապ, Կիլիկիա: Ան զաւակն էր Սարգիս եւ Սաթենիկ Սապունճեաններ:

ատենապետ եւ ապա՝ Շրջանային Վարչութեան կապ:

1998-2002, դարձեալ յաջորդական երկու շրջան, մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ վարած է ատենադպիրի պաշտօն:

1991-ին եւ 1995-ին մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Ե.եւ Զ. Պատգամաւորական Ընդհանուր ժողովներուն, որոնց դիւաններուն մէջ վարած է ատենադպիրի պաշտօն:

2007-ին վերադառնալով մասնաճիւղ ընտրուած է վարչութեան անդամ եւ վարած է ատենապետի պաշտօն: 1985-էն սկսեալ ան վարած է Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութեանց խօսնակի պաշտօն: 1993-ին, Շրջանային Վարչութեան կողմէ պարգեւատրուած է «Մառայութեան» շքանշանով:

1993-ին, մասնաճիւղի 25-ամեակին առիթով պարգեւատրուած է իբրեւ «Օրինակելի Հ.Մ.Ը.Մ-ական»: 1982-էն սկսեալ մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային ներկայացուցչական ժողովներուն, յաճախ վարելով ատենադպիրի պաշտօն:

Նոյեմբեր 2010-ին, անողոք հիւանդութիւնը եղբ. Շիրտրմեանը կանուխ բաժնեց այս աշխարհէն ու Հ.Մ.Ը.Մ-էն:



ԵՂԲ. ԾՈՐԾ ԱՐԷԼԵԱՆ


Եղբ. Ծործ Արելեան ծնած է 1946-ին, Դամասկոս, Սուրիա, քեսապցի ազգասէր ընտանեկան յարկի մը տակ: Փոքր տարիքին ընտանիքին հետ փոխադրուած է Հայկեալ եւ ուսանած է տեղւոյն Հայ Աւետարանական Էմմանուէլ Վարժարանը: Միաժամանակ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Հայկեալի մասնաճիւղին, իբրեւ մարզիկ եւ երկար տարիներ մարզուած ու մասնակցած է իր տարեկիցներու Ֆութպոլի մրցումներուն:

Համալսարանական ուսումը ստացած է Լիբանանի Հայկազեան Գոլէճը եւ այդ տարիներուն, Հայկական Ցեղասպանութեան նուիրուած քայլարշաւին, Ցեղասպանութեան ոճիրը հայուն եւ օտարին ուշադրութեան արժանացնելու նպատակով, տառապանքի հսկայ խաչը շալկած, մինչեւ Պիքֆայայի յուշարձան քալելով բարձրացուցած է զայն:

1972-ին վերջնականապէս Լոս Անճելըս փոխադրուելով, եղբ. Արելեան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղին եւ մեծապէս օգտակար հանդիսացած է անոր կազմակերպչական աշխատանքներուն: Հ.Մ.Ը.Մ-ի հոգածութեան յանձնուած հայ երիտասարդութեան մօտ մարմնամարզի եւ մանաւանդ ինքնապաշտպանութեան ոգին զօրացնելու նպատակով, նախաձեռնած է մասնաճիւղի մարտարուեստի առաջին խումբի ստեղծման, հմայելով մեծ թիւով պատանի-երիտասարդներ: Ան մեծ ներդրում ունեցած է Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան մարզախաղերու եւ յատկապէս՝ երիտասարդական շքերթներու կազմակերպման մէջ:

Ուրախ էր, որ տեսաւ Հայաստանի վերանկախացումը: Ամէն տարի, 28 Մայիսին, Հայաստանի անկախացումը յատուկ ձեւով կը նշէր ընկերներուն հետ, իր հիւրընկալութեամբ: Գարեգին Նժդեհի ազգային գաղափարախօսութենէն հմայուած, Հայաստանի վերանկախացումէն անմիջապէս ետք, 1991-ին, իր ուխտը կատարելով, բարձրացած է ԽՈՍ-տուփ լեռ եւ իր յարգանքի տուրքը մատուցած է անոր յիշատակին:

Անողոք մահը կանուխ հեռացուց զայն այս աշխարհէն:



ԵՂԲ. ԳԷՈՐԳ ԱՍԼԱՆԵԱՆ

Եղբ. Գէորգ Ասլանեան ծնած է 1944-ին, Պէյրութ, Լիբանան, ազգանուէր ու համեստ ընտանեկան յարկի մը տակ: Փոքր տարիքէն անդամակցած է ծննդավայրի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղին, իբրեւ գայլիկ: Շատ սիրելով բնութիւնը եւ սկաուտական կեանքը,

հասած է մինչեւ երէց փաղանգ, պատասխանատու պաշտօններ ստանձնելով սկաուտական շարքերէն ներս:

Եղբ. Ասլանեան երիտասարդ տարիքին նետուած է կեանքի ասպարէզ եւ յաջողած է: 1970-ին ամուսնացած է Մարո Արթինեանի հետ եւ բախտաւորուած է երեք զաւակներով, որոնք իր օրինակին հետեւելով եղած են իրաւ Հ.Մ.Ը.Մ-ականներ:

1978-ին, ընտանիքին հետ փոխադրուած է Միացեալ Նահանգներ, Լոս Անճելըս, ուր Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի շարքերուն միանալով, եղած է անոր աշխոյժ անդամներէն: Միաժամանակ, ստանձնելով, նոյն յարկին տակ գործող Հ.Յ.Դ. «Գարեգին Նժդեհ» կոմիտէութեան ակումբի «Հայրիկ»ի պատասխանատուութիւնը, եղած է բոլորին սիրելի ՀԱՅՐԻԿը:

Եղբ. Ասլանեան երբեք բարձր պաշտօններու ձգտումը չէ ունեցած եւ միշտ եղած է անշահախնդիր եւ համեստ, իրեն վստահուած որեւէ պարտականութիւն կատարելու պատրաստակամութեամբ: Ան միշտ ներկայութիւն եղած է Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքներուն եւ ժողովներուն մէջ: Այնուհետեւ մասնագիտանալով ճաշի սպասարկման (catering) մարզէն ներս, Հ.Մ.Ը.Մ-ի եւ հայկական կազմակերպութիւններու ուրախութեան եւ տխրութեան սեղանները լեցուցած է առատութեամբ:

Եղբ. Գէորգ Ասլանեան սիրուած ու յարգուած էր իր շրջապատէն: Ան ազնիւ, առատաձեռն ու պարկեշտ նկարագրի տէր անձնաւորութիւն մըն էր: Կը սիրէր կատակել եւ ժպիտ պարգեւել իր շրջապատին: Եղբոր մահը շատ անսպասելի եւ անակնկալ էր բոլորին:



Հ.Մ.Ը.Մ.-«ՖՐԱՆՍ»-Ի 95-ՄԱՆԵԱԿԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՄՐՑԱԾԱՐՔԻ ԵՒ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ



Սեւան Նազարեան ՓՈՐՈՉ

ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքը 2013-ի Նոյեմբեր ամսուն գրեթէ ամէնուրեք տօնախմբեց միութեան 95-ամեակի պանծալի տարեդարձը: Տարեդարձ, որուն իւրաքանչիւր տարին լեցուն եղած է յաջողութիւններով, դէպի յառաջ երթով, հայկականութեամբ, մարդասիրութեամբ, ուրիշին հասնելու եւ օգնելու տենչով, անոր հետ եղբայրանալու ու զայն բարձրացնելու հեռանկարով:

Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ը, այս մեծ միութեան մէկ փոքր մասնիկը եւ արեւելքն ու արեւմուտքը շղթայող օղակը, իր կարգին վառեց մոմը տարեդարձի, որմով լուսաւորուեցաւ մանաւանդ ինքը, իր երիտասարդներուն փոխանցելով Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարախօսութեան ջահը:

Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութեան համար այս տարեդարձին նշումը կարծէք առիթ մըն էր երիտասարդական այս միութիւնը աւելի մօտեցնելու երիտասարդութեան, հասնելու անոր ու անոր հետ բաժնելու տօնախմբութեան հաճոյքը:

Գլխաւոր երկու մասէ բաղկացած այս ձեռնարկին առաջինը պասքէթպոլի մրցաշարք մըն էր, երիտասարդութեան համախմբում:



2 Նոյեմբեր 2013-ին, Փարիզի արուարձաններէն հայաշատ Ալֆորվիլի «Լափիէր» մարզասրահին մէջ, պասքէթի 18 արական եւ 4 իգական խումբեր (3-ի դէմ 3), ընդհանուր՝ 95 մարզիկ ամբողջ օրուան ընթացքին մրցեցան: Պասքէթի կողքին, կար նաեւ փինկ-փոնկը, ուր 20 մարզիկներ կատարեցին իրենց մրցումները:

Անշուշտ յաղթանակ արձանագրելը կարեւոր տուեալ մըն էր, սակայն գլխաւոր թիրախը եղբայրական ոգիի ու մանաւանդ հայկական միջնորոտի ստեղծման սատարելն էր, որուն համար ոչ մէկ ճիգ խնայած էին Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութիւնն ու իր մարզական յանձնախումբը:

Մարզադաշտը ստացած էր հայկական դիմագիծ՝ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներ, որմագղներ, դրօշներ... այլ գոյն տուած էին անոր:

Մարզադաշտ այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ականներ, համակիրներ, մարզասէրներ, մեծ թիւով երիտասարդներ, որոնք ճաշակեցին նաեւ վարչութեան կողմէ ապահովուած համադամ ուտեստը:

Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութեան ատենապետ եղբ. Անտրէ Տատայեան եւ Կեղրոնական վարչութեան անդամ եղբ. Հրաչ Սիսեռեան մարզիկներուն փոխանցեցին մրցաշարքի կազմակերպման նպատակն ու սրտի խօսքը:

Մրցաշարքի աւարտին տեղի ունեցաւ յաղթական խումբերու մրցանակներու բաշխումը:



95-ԱՄԵԱԿԻ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրը, երեկոյան, Ալֆորվիլի Հայ Մշակույթի Տան մէջ, Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութեան հրաւերով կատարուեցաւ 95-ամեակի հիւրասիրութիւնը:

Երեկոն պատուած էին Հ. Հ. դեսպանատան, Ալֆորվիլի եւ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութիւններու, Հ.Յ.Դ. Կ.Կ.ի, Ֆրանսահայ Կապոյտ Խաչի, Համազգայինի, Ս. Մեսրոպ Կրթարանի, Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ, ինչպէս նաեւ մամլոյ ներկայացուցիչները:

Առաջին ժամուն, ճոխ սեղաններու շուրջ հիւրեր, Հ.Մ.Ը.Մ.ականներ թէ համակիրներ ապրեցան բարեկամական պահեր: Անկէ ետք ներկաները հրաւիրուեցան նստելու եւ հետեւելու վարչութեան կողմէ պատրաստուած տեսերիզի մը ներկայացման, 10 վայրկեան տեւողութեամբ, որուն մէջ մէկ-տեղուած էին Հ.Մ.Ը.Մ.ի ընդարձակման պատկերը՝ գաղութէ-գաղութ, բայց նաեւ միութեան տեսլականը՝ ռազմավարական ծրագրի հեռանկարը, ապագայ քայլերը, ինչպէս նաեւ մասնաճիւղի առօրեան:

Երեկոն վարեց եղբ. Լեւոն Պաղտասարեան, հակիրճ կեր-

պով ներկայացնելով օրուան ընթացքը՝ մրցաշարք, 95-ամեակի տօնախմբութիւն:

Վարչութեան անունով, Ֆրանսերէն լեզուով ելոյթ ունեցաւ եղբ. Արամ Սիսեռեան, ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.ի պատմականը, բայց նաեւ՝ միութեան հեռանկարները:

Իր սրտի խօսքը փոխանցելու հրաւիրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբէկեան, որ մտերիմ ու ջերմ պատուով փոխանցեց իր բարեմաղթութիւնները: Ան խօսեցաւ նախ՝ իբրեւ դաշնակցական, ապա՝ Ֆուլթոն խաղացող եւ վերջապէս իբրեւ Հ.Հ. ներկայացուցիչ: Առաջինը՝ հօրմէն հասած ու փոխանցուած Հ.Մ.Ը.Մ.ի նկատմամբ կախարդական մէկ պատկեր. իբրեւ մարզիկ՝ դաշտի վրայ պարտուիլը շիրող հայերու «գաղտնիք»ը եւ վերջապէս, իբրեւ Հ.Հ. ներկայացուցիչ ան կոչ ուղղեց յատկապէս երիտասարդներուն՝ «Մի անձնաւորէք երկիրը, ան բոլորիս տունն է, անոր ինչպէս ըլլալը մեզմէ կախուած է» եւ աւելցուց, թէ՛ «Օր մը մեր տունը կ'ըլլայ լուսաւոր եւ հպարտութիւն կը բերէ բոլոր անոնց, որոնք իրենց շատը կամ քիչը կը դնեն այդ տան մէջ»:



Վերջին ելոյթ ունեցողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Սիսեռեան:

Եղբայրը Կեդրոնական Վարչութեան անունով շնորհաւորեց միութեան 95-ամեակը, ապա պատմականը կատարեց անոր հիմնադրութեան, Հայաստանի Ա. Հանրապետութեան օրերուն անոր կատարած գործին: Եղբայրը աւելցուց, որ «ըսփիւռքացած» Հ.Մ.Ը.Մ.ը այնուհետեւ շարունակեց իր ազգանուէր գործը հայ պահելով գաղութները, օգնելով, որպէսզի չձուլուի երիտասարդութիւնը, ան պահպանեց մշակույթը՝ մարմնամարզի ու սկստութեան ընդմէջէն: Եղբայրը մատ-



նանչեց, թէ «Այսօր հպարտութեամբ կրնանք ըսել, որ 95 տարեկան ենք, դժուար պայմաններու մէջ շարունակած ենք դաստիարակել ու կը հպարտանանք մեր կատարած գործով»:

Եղբ. Հ. Սիսեռեան եզրափակեց իր ելոյթը շեշտելով, որ՝ «Պէտք է օժուիլ Հ-Մ-Ը-Մ-ի ջուրով ու ոգիով, որովհետեւ Հ-Մ-Ը-Մ-ական ըլլալը դիւրին գործ է, սակայն շարունակելը՝ դժուար»:

Եղբայրը յոյս յայտնեց, որ երիտասարդութիւնը պիտի կարենայ այս մեծ միութիւնը առաջնորդել նոր յաջողութիւններու:

Հաւատքն ու աշխատանքն էր, որ յաջողութեան առաջնորդած էր այդ օրը: Բայց մանաւանդ՝ երախտապարտօրէն Հ-Մ-Ը-Մ-ին վերադարձնելու անկէ ստացածը:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICKEN 2005 PARIS

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days



11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



Րաֆֆի Սիլահեան ՀԱԼԷՊ

Շաբաթ, 21 Դեկտեմբեր 2013-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի պարտէզ-մարգարանը հրոյ ճարակ դարձաւ, երբ մօտակայ բնակարանի մը վրայ հրթիռ մը ինկաւ եւ անկէ արձակւած բեկորներուն պատճառով հրդեհ մը յառաջացաւ Հ.Մ.Ը.Մ-ի պասքէթի եւ թենիսի դաշտերուն մէջ, պատճառելով ծանր վնասներ:

Բարեբախտաբար, Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներու, անդամներու եւ փրկարար հրշէջ ջոկատներու արագ միջամտութեան շնորհիւ կարելի եղաւ առաջը առնել տարածուող հրդեհին: Շուտով դէպքին վայրը այցելեցին Հալէպի պետական մակարդակի պատասխանատուներ, միութենականներ, ինչպէս նաեւ օժանդակելու նպատակով դաշտ փութացած մեծ թիւով համակիրներ, որոնք ձեռք-ձեռքի տալով բաւական երկար պայքարեցան հսկայ բոցերու դէմ: Նախաինամութեան շնորհիւ արկածը պատճառեց միայն նիւթական վնասներ:

Հրկիզուող դաշտին հետ այրեցան հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներու յիշատակները: Լուրը յուզեց աշխարհատարած Հ.Մ.Ը.Մ-ականները, որոնցմէ շատերը ունէին դաշտին կապուած յիշատակներ: Արդարեւ, դաշտին մէջ պատրաստուած եւ մարզուած են հազարաւոր փոքրիկներ, մարզիկներ, գայլիկներ եւ սկաուտներ: Նոյն դաշտին մէջ էր որ պատրաստուեցաւ տակաւին շաբաթ մը առաջ Հալէպի ախոյեան հանդիսացած Հ.Մ.Ը.Մ-ի պասքէթի աղջկանց պատանեկան խումբը: Այս դաշտին մէջ էր որ պատրաստուած էր 2000-ին Սուրիոյ ախոյեան հանդիսացած պասքէթի աղջկանց խումբը: Այս դաշտին մէջ էր որ մարզուեցան Սուրիոյ ախոյեան հանդիսացած թենիսի մարզիկները: Եւ դեռ, այս դաշտին մէջ էր որ կազմակերպուեցան սկաուտական բազմաթիւ դաշտահանդէսներ եւ փառատօներ: Չկայ հալէպահայ մը որ այս դաշտին մէջ զնդակ բռնած չրոյսայ: Չկայ հայ մը որ այս պարտէզին մէջ աղ ու հաց կերած չրոյսայ:

Արկածը, անկասկած, խոցեց հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներու հոգիները, բայց անոնց առաջին արտայայտութիւնը եղաւ՝ մեր հայրերը կառուցեցին այս դաշտը, այսօր մենք պատրաստ ենք կրկին անգամ կառուցելու զայն: Մեր բոլորին ջանքերով Հ.Մ.Ը.Մ-ը պիտի մնայ կանգուն: Այս կառույցը պիտի վերադարձնենք աւելի լաւ վիճակի եւ նոյն դաշտին մէջ պիտի կերտենք նորանոր յաղթանակներ: Մեր զաւակները այս դաշտին մէջ պիտի մարզուին, նոյնիսկ եթէ անոր չորս պատերը միայն մնան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ-ականը յուսահատիլ չի գիտեր եւ կը մնայ միշտ պատրաստ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՊԱՐՏԷԶ-ՄԱՐԶԱՐԱՆԸ ՀՐՈՅ ԾԱՐԱԿ ԿԸ ԴԱՌՆԱՅ





Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՍՔԷԹԻ ԱՂՋԿԱՆՑ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՈՒՄՔԸ ՀԱԼԷՊԻ ԱԽՈՅԵԱՆ

Րաֆֆի Սիլահեան
ՀԱԼԷՊ

Հակառակ երկար ժամանակ մարզադաշտերի հեռու մնալուն եւ երկրի քաղաքական ու ապահովական տագնապալի պայմաններում, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի պասքէթի աղջկանց պատանեկան խումբը յաջողեցաւ Հալէպի ախոյեանութեան բաժակը վերադարձնել իր սովորական վայրը՝ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբ: Փորձառու մարզիչ եղբ. Գէորգ Արթինեանի գլխավորութեամբ, խումբը յաջողեցաւ պարտութեան մատնել բոլոր մրցակիցները եւ մրցաշարքին ներկայանալ տպաւորիչ եւ յաջող խաղարկութեամբ, արժանանալով կազմակերպող մարմնի՝ Հալէպի մարզական ֆետերասիոնի գնահատանքին:

Խումբը իր առաջին մրցումը կատարեց Հ.Ե.Ը.ի խումբին դէմ եւ սկիզբէն տիրապետեց խաղարկութեան, արձանագրելով 41-34 արդիւնք, որմէ ետք իր երկրորդ մրցակիցը դարձաւ նախորդ տարիներու ախոյեան՝ «ճալաա»-ն, որ դարձեալ զիջեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմին եւ պարտական դուրս եկաւ՝ 43-32 արդիւնքով: Ախոյեանութեան տիտղոսը մեծ տոկոսով ապահովելով, Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց վերջին մրցակից ունեցան «Հուրիէ»-ն եւ հանդիպումը աւարտեցին 37-20 արդիւնքով:

Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակը կերտեցին քոյրեր Ալիք Սարեան, Ալին Պեսնիլեան, Ճէմնա Տաուլէ, Անի Մկրտիչեան, Գառնի Շահինեան, Մեղեդի Մուրատեան, Մեղրի Ֆրանքեան, Կալի Պապօղլեան, Նարոտ Ղազարեան, Շողիկ Մարտիկեան, Դալար Կտանեան եւ Նաթալի Սարամանուկեան: Խումբին մարզիչն է Գէորգ Արթինեան, օգնական մարզիչը՝ Դալար Արապաթեան, իսկ պատասխանատուն՝ եղբ. Ալեք Ասայեան:

Կ իրակի, 29 Դեկտեմբեր 2013-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի Երեւանի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում մը Երեւանաբնակ սուրիահայ սկաուտ պատասխանատուներու հետ: Հանդիպումին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Գապագեան, Հայկալի մասնաճիւղի վարչութեան նախկին ատենապետ եղբ. Զաւէն Բախտիկեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի սկաուտական ընդհանուր խմբապետ եղբ. Գէորգ Գասպարեան:

Հաւաքին նպատակն էր նոր թափ տալ Հայաստանի սկաուտական կեանքին եւ քաջալերել սուրիահայ գաղթիկ սկաուտները, որպէսզի միանան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի շարքերուն, նաեւ՝ աշխատանք տանիլ նոր անդամներու անդամագրութեան: Գործնական ըլլալու համար, ներկաներու առաջարկով անմիջապէս կազմուեցաւ վեց հոգիանոց առժամեայ խորհուրդ մը՝ յառաջիկայի աշխատանքային ծրագիրները մշակելու եւ անդամահաւաքի գործնական քայլեր առնելու նպատակով: Նաեւ որոշուեցաւ այս առնչութեամբ դիմատետրի երկու էջեր ստեղծել (ներքին փակ եւ արտաքին բաց), աշխատանքը աւելի հեզասահ յառաջ տանելու համար:



ՍՈՒՐԻԱՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ...

...ԵՒ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԷՋ

Գրեթէ նոյն օրերուն, նմանօրինակ հանդիպում մըն ալ տեղի ունեցաւ Լիբանան գտնուող Հ.Մ.Ը.Մ.ական սուրիահայ սկաուտներու համար: Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին հիւրընկալութեամբ, հանդիպումը կատարուեցաւ Նոր Սիսի «Ազիրեան» ակումբին մէջ, ներկայութեամբ շուրջ 100 Հ.Մ.-

Ը.Մ.ական քոյր-եղբայրներու: Հանդիպումին բացումը կատարելով, ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի սկաուտական պատասխանատու եղբ. Յակոբ Չպլաքեան: Ան մաղթեց, որ 2014-ը խաղաղութիւն բերէ տագնապահար Սուրիոյ եւ Հ.Մ.Ը.Մ. վերագտնէ անցեալի իր կենսունակութիւնն ու բնականոն գործունէութիւնը:

Հանդիպումին հիւրաբար ներկայ գտնուեցաւ եւ իր սրտի խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբայրը շնորհակտեց ներկաներու տօնական օրերը եւ մաղթեց, որ Հ.Մ.Ը.Մ.ական կամքն ու եռանդը անպակաս ըլլան իրենց մօտ, որպէսզի սերնդակերտման ու հայակերտման իրենց աշխատանքները շարունակեն մայր գաղութ Հայկէն հեռու՝ Լիբանանի մէջ, ուր եւս Հ.Մ.Ը.Մ. ունի գործունէութեան լայն դաշտ, առաքելութիւն եւ դերակատարութիւն:

Խօսքերէն ետք, հանդիպումը ունեցաւ գեղարուեստական հաճելի բաժին: Բոլորը միասնաբար անցուցին յիշատակելի ժամեր՝ պահ մը վերապրելով Հայկալի մէջ Հ.Մ.Ը.Մ.ական տօնախմբութիւններու իրենց երբեմնի միջնորդութիւնը:





Յովհաննես Մարտոյեան ՄԻՏԻ

Տարի մը ամբողջ, Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ ըսկառուտական բոլոր բաժանմունքները՝ Արի, Արենոյշ, Գայլիկ, Արծիկ, Կակուղ թաթիկ եւ Մըջնիկ բանակումի երգերով խանդավառ՝ պատրաստուեցան բանակելու բնութեան մաքուր մթնոլորտին մէջ, իրարու հետ, իբրեւ մէկ մեծ ընտանիք, քոյր ու եղբայր հասկացողութեամբ, միաժամանակ փոխանցուած գիտելիքներով ու դասախօսութիւններով ամրապնդելու համար միութեանական ու ազգային իրենց ապրումներն ու հաւաքական ոգեւորութիւնը:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ», «Նաւասարդ» եւ «Արարատ» մասնաճիւղերու սկառուտական կազմերը, ընդառաջելով Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան հրահրին, 4-7 Հոկտեմբեր 2013-ին, միջ-մասնաճիւղային իրենց 17-րդ ընդհանուր բանակումը կատարեցին «Պէյտըն Փաուըր» բանակավայրին մէջ:

Բանակումին կազմակերպչական բաժինը վստահուած էր խմբապետական միացեալ կազմին, գլխաւորութեամբ Շրջանային խմբապետ եղբ. Արա Պոյաճեանին: Բանակումին անբա-

«Օ՛Ն, ԲԱՆԱԿՈՒՄ, ԴՈՒ ԵՍ ՄԵՐ ԻՏԷԱԼԸ Օ՛Ն, ԲԱՆԱԿՈՒՄ, ԻՆՉ ԱՆՈՒՇ ԱՆՈՒՆ»...



ժանելի մասը կազմեց ծնողական միացեալ յանձնախումբը, որ օրական 24 ժամ հսկելով, մատակարարելով, հոգաց ու խնամեց Հ.Մ.Ը.Մ.ի մատղաշ սերունդը: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամ-

եակին նուիրուած այս ձեռնարկը խօսուն փաստն է Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան՝ պատրաստել առողջ, չարքաշ, առողջ հայ անհատը՝ ազգային բոլոր յատկանիշներով:

Բանակումին ազդանշանը տրուեցաւ 4 Հոկտեմբերի երեկոյեան, երբ 128 բանակող քոյրեր ու եղբայրներ, խմբապետական կազմի եւ ծնողներու առաջնորդութեամբ, հասան բանակավայր: Դատարկ բանակատեղին յանկարծ կեանքի վերածուեցաւ եւ մեր մատղաշ սերունդին ներկայութեամբ ազգային բոլորով շնչաւորուեցաւ:

Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը լծուեցան գործի, ճշդուեցաւ բանակավայրի մուտքի բաժինը, ձեռնային աշխատանքով հսկայ շուշանածաղիկը հաստատուեցաւ մուտքի ճակատին, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակի խորհրդանիշը տեղադրուեցաւ հրապարակին կեդրոնը:

Յաջորդ օր տեղի ունեցաւ բանակումին պաշտօնական բացումը: Բանակող

քոյրերն ու եղբայրները լման տարագրով, լայն շրջանակ մը կազմած, հետեւեցան դրօշակի արարողութեան: Ձեռնային աշխատանքով պատրաստուած երեք ձողերու վրայ բարձրացան Աւստրալիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակները, հնչեցին քայլերգները: Ամբողջ կազմը բարեկի կանգնած՝ փառաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակը: Չորս օրերու վրայ երկարող բանակումը ընդգրկեց օրական մարզանք, արշաւներ, ձեռնային աշխատանք, սկառուտական խաղեր, դասախօսութիւններ եւ խարուկահանդէս:

Բանակումին վերջին օրը ժամանեցին Կակուղ թաթիկները, ծնողներն ու բարեկամները: Տարբեր տարիքի բազմահարիւր ներկայութիւն, հայկական խորովածի սպասարկութիւն, տօնական մթնոլորտ եւ այդ բոլորին ընդմէջէն նորահաս սերունդի հայեցի դաստիարակութեան լծուած խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետ-խմբապետուհիներու սիրալիւր ընդունելութիւն:

Յետմիջօրէին տեղի ունեցաւ բանակումի փակման հանդիսութիւնը: Լման տարագրով խումբերը շրջանակ կազմած հետեւեցան դրօշակի արարողութեան: Կատարուեցաւ Նորընձաներու երգում

եւ գնահատագիրներու բաշխում: Բոլորը բարեկի կանգնած արժեւորեցին Հ.Մ.Ը.Մ.ի 95-ամեակը, իրարու խօստանալով հանդիպիլ միջ-մասնաճիւղային 18-րդ ընդհանուր բանակումին:



Հ.Մ.Ը.Մ. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՄԸ...

Շարունակուած Բ. կողքէն

յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի արհեստագիտական տեղեկատուութեանց յանձնախումբի ատենապետ եղբ. Վիգէն Աբէլեան:
«Այս համաձայնութիւնը դրական փոփոխութիւններ պիտի յառաջացնէ եւ բանալին պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի կամաւոր աշխատանքի ձեւը զարգացնելու դէպի համաշխարհային մասնագիտացած ձեւի», հաստատեց Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագրաւորումի գործադիր յանձնախումբի ատենապետ եղբ. Արմէն Աբրահամեան:
Յաւելեալ մանրամասնութիւններու համար կարելի է կապուիլ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Դաւթեանի կամ office@homenetmen.org ե-նամակի հասցէին:



ԿՆՔԱՀԱՅՐՈՒԹԵԱՄԲ՝ ԵՂԲ. ԶԱԻԻԿ ԳԱԼՅԱՅԵԱՆԻ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԴՊՐՈՑԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՆՁՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Շաբաթ, 9 Նոյեմբեր 2013-ին, Հ.Մ.Ը.Մ-ի «Հայր Պողոս Արիս» դաշտին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի Ֆուտբոլի դպրոցի երկրորդ հունձքի վկայականներու բաշխման հանդիսութիւնը, կնքահայրութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտբոլի ներկայացուցչական խումբի նախկին մարզիկներէն եղբ. Զաւիկ Գալֆայեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեանի, Շրջանային Վարչութեան օրուան ատենապետ՝ եղբ. Յակոբ Քէշիշեանի եւ անդամնե-

րու, Ֆուտբոլի ծնողաց յանձնախումբին, մարզիկներու ծնողներու եւ հրահրեալներու:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց ծնողաց յանձնախումբի ատենապետ Ռուբէն Եփրեմեան: Ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտբոլի դպրոցը, որ իր դռները բացաւ մանուկ եւ պատանի

տղոց դիմաց, այսօր կ' ունենայ շրջանաւարտներու իր երկրորդ հունձքը՝ տասնվեց հոգինոց խումբով:

«Հայ դպրոցի կողքին, ուր կը սորվինք մայրենի լեզու ու կը ստանանք կրթութիւն, Հ.Մ.Ը.Մ-ի Ֆուտբոլի դպրոցը կու գայ ամբողջացնելու հայ մանուկին եւ պատանիին կերտումը, մտքի կրթութեան կողքին անոր տալով մարմնակրթանք, դաստիարակութիւն եւ կարգապահութիւն, ազնիւ ու եղբայրական մրցակցութեան այբուբենը սորվեցնելով հայ մարզիկին, որպէսզի ան ձգտի լաւագոյնին, հասնի յաջողութեան եւ բարձրանայ ու բարձրացնէ»:

Շարունակելով, Եփրեմեան հաստատեց. «Հպարտ ենք, որ այսօր վկայագիր ստացող աշակերտները պիտի անցնին



այլ հանգրուան՝ Հ.Մ.Ը.Մ-ի զանազան խումբերէն ֆուլթպոլ խաղալու, որպէսզի անոնք օր մը կրեն պարծանք եւ հպարտութիւն ներշնչող Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական խումբին եռագոյն տարազը»:

Բացման խօսքէն ետք, Ռուբէն Եփրեմեան ներկայացուց օրուան կնքահայր եղբ. Զաւիկ Գալֆայեանը: Եղբ. Գալֆայեան Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթպոլի ներկայացուցչական խումբին մաս կազմած է շուրջ 20 տարի, 1960-1970-ական թուականներուն: Ան Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթպոլի խումբի անդամ Գառնիկ եւ Յակոբիկ Գալֆայեաններու եղբայրն է: Հազուադէպ երեւոյթ է, որ երեք եղբայր միասին նոյն խումբէն ֆուլթպոլ խաղան:

1975-ին, Լիբանանի քաղաքացիական պատերազմին եւ տարիքի բերումով ֆուլթպոլի ասպարէզը ձգելէ ետք, եղբ. Գալֆայեան միշտ ալ գտնուած է Հ.Մ.Ը.Մ-ի կողքին, ներկայ գտնուելով Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական եւ մասնաճիւղերու բոլոր խումբերու խաղերուն:

Կենսագրականին յաջորդեց օրուան կնքահայր խօսքը: Յուզումով բեմ բարձրանալով, եղբ. Գալֆայեան ըսաւ. «Զգացուած եմ այս պատիւը ինծի տրուելուն համար: Թերեւս արժանի չեմ անոր: Ինչ որ ըրած ենք այս միութեան տակաւին քիչ է»: Ապա, իր խօսքը պատանի մարզիկներուն ուղղելով ան շարունակեց. «Դուք հպարտ պէտք է զգաք, որ այս միութեան անդամ էք, աւելի հպարտ պէտք է զգաք, որ կը կրէք Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթպոլի խումբին տարազը: Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկը այլ մարզիկներէ կը տարբերի իր ունեցած կարգապահութեամբ: Լա՛ւ հետեւեցէք մարզումներուն եւ եղէք կարգապահ: Ես ֆուլթպոլ խաղալ սկսած եմ 13-14 տարեկանիս: Մեզի համար ատենին երազ էր Հ.Մ.Ը.Մ-ի տարազը կրելը, ձեզի համար ալ պէտք է երազ ըլլայ, որովհետեւ սուրբ է այս տարազը եւ սուրբ է Հ.Մ.Ը.Մ-ը: Որպէս այս հունձքի կնքահայր, ես շրջանաւարտներու այս հունձքը կը կոչեմ Սարգիս Ազնաւուրեան սերունդ»:

Այնուհետեւ, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի օրուան Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթպոլի



դպրոցը կու տայ շրջանաւարտներու իր երկրորդ հունձքը: «Խումբ մը սղաք, որոնք պատրաստ են յագեցնելու ծարաւը եւ իրականացնելու փափաքը Հ.Մ.Ը.Մ-ի բազմահազար համակիրներուն, կանաչ դաշտերու վրայ տեսնելու Հ.Մ.Ը.Մ-ի նորօրեայ դեղին սատանաները», ընդգծեց ան:

Եղբ. Քէշիշեան Երջանային Վարչութեան անունով շնորհաւորեց բոլոր մարզիկները, պատասխանատուները, մարզիչներն ու ծնողները, որոնք կը քաջալերեն իրենց զաւակները յաճախելու ֆուլթպոլի դպրոց, զանոնք վստահելով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

«Այսօր անմոռանալի օր մը պիտի ըլլայ շրջանաւարտներէն իւրաքանչիւրին համար, որոնք հպարտ ճակատով պիտի կրեն Հ.Մ.Ը.Մ-ի շապիկը, պիտի մրցին մարզական սպիտակ, քրտինք թափեն ու

պայքարին դաշտերու վրայ հպարտանքի առիթներ ստեղծելու համար Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներուն», ըսաւ եղբ. Քէշիշեան:

Երջանային Վարչութեան խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան, Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան, Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթպոլի դպրոցին մօտ Հ.Մ.Ը.Մ-ի Երջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրայր Ֆերմանեան եւ օրուան կնքահայր եղբ. Զաւիկ Գալֆայեան կատարեցին 16 շրջանաւարտներու վկայականներուն բաշխումը: Ծնողաց յանձնախումբը, իր կարգին, յուշանուէրներ յանձնեց եղբայրներ Ստեփան Տէր Պետրոսեանի, Յակոբ Քէշիշեանի, Հրայր Ֆերմանեանի, Զաւիկ Գալֆայեանի եւ իւրաքանչիւր շրջանաւարտի:



ԵՂԲ. ԺՈՐԺ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՀԱՇՈՒԱՊԱՀ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

21 Դեկտեմբեր 2013-ին, Ճիւնիի «Սանթրալ» ակումբին մէջ տեղի ունեցան Լիբանանի պասքեթպոլի նոր ֆետերասիոնի ընտրութիւնները, ներկայութեամբ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարի ներկայացուցիչ Մոհամմէտ Աուէյտաթի եւ նախարարի գործակատար Էլի Շահինի:



Ընտրութիւններուն իրենց մասնակցութիւնը բերին ֆետերասիոնին անդամագրուած 129 ակումբներէն 120-ը: Ուստի Նասսարի գլխաւորած 15 հոգինոց ցանկը ամբողջութեամբ յաջողեցաւ, մինչ մրցակից կազմը, որ կը գլխաւորէր ֆետերասիոնի նախկին նախագահ Փիեռ Քահիա, ձախողեցաւ:

Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչ եղբ. Ժորժ Սապունճեան, որ մաս կը կազմէր Նասսարի գլխաւորած ցանկին, ընտրուեցաւ նոր ֆետերասիոնի անդամ: Ան ապահովեց 118 ձայն եւ ստանձնեց հաշուապահի պաշտօն:



with the complements of

ABRIMIAN BROTHERS, NEW YORK



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 45-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՀԱՆՌԷՍ

Մարո Քեչիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելլոսի մասնաճիւղի 2013-ի աշխատանքները պաշտօնապէս եզրափակուեցան սկաուտական բաժանմունքի տարեկան հանդէսով, որ նուիրուեցաւ մասնաճիւղին 45-ամեակին:

Հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 15 Դեկտեմբեր 2013-ի երեկոյեան, «Պարնստոլ Կէլլրի» թատերասրահը, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներու, համակիրներու եւ յատկապէս ծընողներու ներկայութեան:

Սրահի մուտքին, բաժանմունքի սկաուտական աշխատանքներու լուսանկարներով պատրաստուած «Հ.Մ.Ը.Մ.» չորս հսկայական տառերը, սկաուտական կապերով հիւսւած դուռն ու սկաուտական չարքաչ կեանքը ներկայացընող գործերը մեծապէս ոգեւորեցին հիւրերը:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ դրօշակի տպաւորիչ

արարողութեամբ: Օրհնութեան իր խօսքը փոխանցեց Հովիվուտի Ս. Կարապետ եկեղեցւոյ հովիւներէն Հրանդ Քհնյ. Երէցեան, որ վեր առնելով Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը՝ ըսաւ. «Մեզի համար Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները հայրենի մեր բանակն են, եւ իբրեւ այդպիսին՝ հայ ժողովուրդի ակնկալութիւնները շատ են եւ յոյսերը՝ բազում: Ակնկալութիւնները շատ են, որովհետեւ մենք, երբ մեր աչքերը բացինք Հ.Մ.Ը.Մ.ը տեսանք, Հ.Մ.Ը.Մ.ի մէջ աշխատեցանք ու այդպէս մեծցանք՝ հայութեան ծառայե-

լու, հայութեան նուիրուելու համար: Հ.Մ.Ը.Մ.ը լուսանցքի վրայ երբեք չէ եղած եւ ոչ ալ կրնայ ըլլայ: Մենք հայութեան ծառայելը պատիւ պէտք է համարենք եւ ոչ՝ պարտականութիւն»:

Սկաուտական բաժանմունքի խօսքը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Նարեկ Մեծաչեան: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, ծնողներուն եւ սկաուտ ղեկավարներուն, որոնք հաւատքով կը մօտենան Հ.Մ.Ը.Մ.ին եւ յաջողութեան կ'առաջնորդեն զայն:

Այնուհետեւ, բեմը յանձնուեցաւ մասնաճիւղի սկաուտական շարքերուն, որոնք իբրեւ օրուան թեմա ընտրած էին սկաուտական հարազատ կեանքը արտացոլող խարուկահանդէսը: Բնական է, որ թատերասրահին մէջ կարելի չէր խարոյկ վառել, սակայն անոնք սկաուտի հնարամտութիւնը ի գործ դրած՝ կրակագոյն ժապաւէններով, գեղեցիկ լոյսերու խաղերով ու հովահարներով կարողացած էին խարոյկի մը իսկա-





կան պատկերը ներկայացնել բեմին վրայ: Ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեցին սկաուտ պատասխանատուներ եղբ- Գէորգ Աշճեան եւ քոյր Նարէ Նաշալեան, որոնք երբեմն գեղեցիկ խօսքերով, երբեմն ալ սկաուտական հինգ ծափերն ու ոգեւորող կանչերը մասնակիցներուն սորվեցնելով՝ գուարթ մթնոլորտ մը ստեղծեցին սրահէն ներս:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որուն ընթացքին միայն հայերէն լեզուն հնչեց, եւ մանաւանդ ազգային ոգին ու հայրենասիրութիւնը դրսեւորուեցան:

Կակուղ թաթիկէն մինչեւ երէց-պարմանուհիներ իրենց բաժինը բերին օրւան յայտագիրին՝ ելեկտրականացած մթնոլորտ մը ստեղծելով: Տպաւորիչ էին կակուղ թաթիկներու Եռագոյն դրօշներով հայ ըլլալու հպարտալի խոստումը, գայլիկ-արծուիկներու «Իմ անունը Հայաստան է» խրմբերգն ու «Խօսք իմ որդւոյն» արտասանութիւնը՝ կիթառի ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ՝ սկաուտներու հայրենասիրական երգերն ու ներկայացուցած բուրգերը, արենոյշներու հայկական պարն ու «Սարգարապատ»ի խմբերգումը: Այս բոլորը ոգեւորեցին եւ յուսադրեցին ներկաները, որոնք հպարտանքի երկարաշունչ ծափողջոյններով գնահատեցին իւրաքանչիւր ելոյթ:

Հանդէսի վերջին բաժինով բեմ ներկայացաւ մասնաճիւղի սկաուտական ամբողջ բաժանմունքը: Տեղի ունեցաւ սկաուտական յատուկ արարողութիւն: Տարիքի բերումով, խմբակ մը գայլիկներ վերջին անգամ կատարելով իրենց «Մեծ կանչը»՝ փոխանցուեցան սկաուտական շարքեր: Յանձնուեցան սկաուտական գանազան աստիճաններ եւ պաշտօններ այն քոյր-եղբայրներուն, որոնք սկաուտական գիտելիքները իւրացնելով՝ մնալուն ներկայութեամբ անշահախնդիր գործունէութիւն ցուցաբերած էին տարուան ընթացքին: Իբրեւ սկաուտ ղեկավարներ, արի-արենոյշ խմբապետի աստիճանին արժանացան եղբ. Արմէն Սաֆարեանն ու քոյր Թամար Ղարիպեանը եւ վերանորոգելով սկաուտական իրենց երդումը՝ հրապարակաւ խոստացան արդարութեամբ եւ հաւատքով կատարել իրենց վստահեցած պարտականութիւնը:

Մասնաճիւղի վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Յովիկ Շահինեան: Ան առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք ընդառաջած էին մասնաճիւղի հրաւերին, այն մասնաճիւղին, որ 1968-ին հիմնուելով դարձած է մայրը շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին եւ 45 տարիներու ընթացքին իր մայրական պարտականութիւնը կատարելով տուած է ղեկավարներ:

«Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղը հարուստ է իր անդամներով, որուն համար կը պարտինք 45 տարիներ շարունակ գործած անցեալի սերունդներուն, անդամներուն, խմբապետներուն եւ ղեկավարներուն: Շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել հոս ներկայ եւ բացակայ անդամներուն: 45 տարիներ շարունակ, ձեր աշխատանքը, ձեր ներդրումը եւ օգնութիւնը պատճառ հանդիսացան, որ այս հանդէսը իրականութիւն դառնայ: Առանց ձեր գոհողութիւններուն, անկարելի էր որ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղը այս բարձունքին հասնէր», ընդգրծեց եղբ. Շահինեան: Ապա ան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք իրենց զաւակները կը վստահին Հ.Մ.Ը.Մ.ին եւ ի գին մեծ գոհողութիւններու իրենց զաւակները կը բերեն Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն: Եզրակացնելով, եղբ. Շահինեան յատուկ գնահատանք արձանագրեց մասնաճիւղի խմբապետներուն եւ մասնաճիւղի սկաուտական



գերագոյն մարմինին, որոնք համոզումով ու մեծ սիրով լաւապէս կը կատարեն իրենց յանձնուած պարտականութիւնները:

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ.Նահանգներու Շրջանային Սկաուտական Խորհուրդին անունով շնորհաւորական ելոյթ ունեցաւ քոյր Թալին Հինտոյեան, որ բարձր գնահատելով մասնաճիւղի դեկափարներուն, աստիճանաւորներուն եւ սկաուտներուն կամաւոր աշխատանքը՝ հաստատեց, թէ անիկա «45 տարիներ շարունակ կը փաստէ, թէ Սփիւռքի մէջ հայ գաւազ կարելի է հայ պահել: Կամաւոր՝ կը նշանակէ ազատ կամքով գիտութեամբ դրուած մարդ: Սկաուտական տարագ հագած ու Հ.Մ.Ը.Մ-ի վահանը կրած սկաուտ մը կը ներկայացնէ կամաւոր ուժ մը, որ ո՛չ միայն կերպարանքով ու վարուելակերպով կարգապահ է, այլ նաեւ գիտակից է իր պարտականութեան: Սկաուտական իր դաւանանքն




ու խոստումը իբրեւ գէնք գործածելով՝ ան կը յաղթահարէ ժամանակներու ստեղծած դժուարութիւններն ու արգելքները», շեշտեց քոյր Հինտոյեան:

Օրուան խրատուսիչ յայտագիրը վերջ գտաւ Հրանդ Քհնյ. Երէցեանի «Պահպանի» ջով եւ Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով:

Ներկաները գոհունակութեամբ մեկ-

նեցան տուն, Հ.Մ.Ը.Մ-ին առաւել զօրակցելու հաստատ համոզումով, իսկ հանդէսի մասնակից դայլիկ-արծուիկները, արի-արենոյշներն ու երէց-պարմանուհիները՝ 2014-ը նորանոր նուաճումներով հարստացնելու հաստատակամութեամբ:



Elegance Plus

Shoes, Bags,
Fashion Accessories
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 38-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ ՊՈՍԹ-ԸՆԻ ՄԱՍՆԱԾԻԲՆԻ 40-ԱՄԵԱԿԻ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՆ



Թղթակից ԵՐԵԿԱՆ

8 -10 Նոյեմբեր 2013-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արևելեան Միացեալ Նահանգներու 38-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ հիւրընկալութեամբ Պոսթընի մասնաճիւղին, որ տարուան ընթացքին կը նշէր մասնաճիւղին հիմնադրութեան 40-ամեակը:

Պրրլինկթընի «Շերեթըն» պանդոկին մէջ կատարուած ժողովին մասնակցեցան քառասունէ աւելի ներկայացուցիչներ, որոնք կը ներկայացնէին ինը տարբեր մասնաճիւղեր՝ Ալպընի, Նիւ Եորք, Նիւ Ճորջի, Շիքակօ, Տիթրոյթ, Ուաշինկթըն, Պոսթըն, Փրովիտընս եւ Ֆիլատելֆիա: Ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արևելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներն ու Կեդրոնական Վարչութեան լիազօր

ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեանը: Խորհրդակցական ձայնով մասնակցողներու շարքին էին Հ.Յ.Դ. Արևելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ժան Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Արևելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան մնացեալ անդամները, Շրջանային Մարզական յանձնախումբի եւ Սկաուտական Խորհուրդի ներկայացուցիչները, ուղեկից կազմակերպութիւններու ներկայացուցիչները եւ հրաւիրեալներ:

Ժողովին ատենապետներն էին եղբայրներ Պետիկ Տէր Վարդանեան եւ Սարգիս Ստեփանեան, ատենադպրուհիներ ընտրուած էին քոյրեր Լենա Քէշիշեան եւ Սիրան Գրիգորեան:

Ժողովը իր աշխատանքներուն սկսելով, առաջին հերթին ունկնդրեց մասնաճիւղերու միամեայ եւ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները: Այսպէս, եռօրեայ նիստերու օրա-

կարգը ընդգրկեց Հ.Մ.Ը.Մ.Ի Արևելեան շրջանի վերջին երկու տարուան գործունէութեան զեկոյցը, ապագայի նպատակներու ներկայացումը, Ցեղասպանութեան հարիւրամեակը, մարզական եւ սկաուտական գործունէութիւններու զեկոյցը, ներառեալ՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերը: 2014-ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին առնչութեամբ կատարուեցան առաջարկներ:

Ներկայացուցչական ժողովը ծրագիրներ մշակեց յառաջիկայ երկամեակի մարզական, սկաուտական, կազմակերպչական, նիւթական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, օրացոյցի եւ կայքէջի աշխատանքներուն գծով:

Ժողովը լսելէ ետք Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրն ու հաշուեկշիռը, հանգամանօրէն քննարկեց կատարուած աշխատանքները եւ հասաւ համապատասխան եզրակացութեան՝ մատնանշելով այն բաժինները, որոնք բարեփոխութեան կը կարօտին: Ժողովը իր գնահատանքը յայտնեց Շրջանային Վարչութեան տարած գնահատելի աշխատանքներուն համար:

Ժողովի աւարտին, ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետը, Հ.Յ.Դ. Կ.Կ.Ի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները գնահատանքի խօսքեր ուղղեցին դիւանին եւ ներկայացուցիչներուն: Անոնք նաեւ բարեմաղթութիւններ եւ յաջողութիւններ փոխանցեցին նորընտիր Շրջանային Վարչութեան:

Հուսկ, ժողովը ընտրեց 2014-2015 տարեշրջանի եօթնանդամ նոր Շրջանային Վարչութիւնը հետեւեալ անդամներէն՝ եղբայրներ Վահէ Թանաշեան (Ուաշինկթըն), Արա Իշխանեան (Ֆիլա-



տելֆիա), Արամ Գալսեյրեան (Պոսթրն), Ռազմիկ Փանոսեան (Պոսթրն), Պերճ Փափազեան (Շիքակո), Սարգիս Դարբինեան (Փրովիտրնս) եւ Մարք Թորոսեան (Նիւ Ճըրզի):

եան եւ Անժելա Հաժժար ներկայացուցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները, ապա կատարեցաւ տողանցք՝ տեղւոյն սկսուող կան կազմին մասնակցութեամբ:

գէն Խաչատուրեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, բեմ հրաւիրեց մասնաճիւղի ատենապետ եղբժէք Պեճաքեանն ու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեանը:

Օրուան հանդիսավարն էր եղբ. Վի-

**ՊՈՍԹՐՆԻ ՄԱՍՆԱՃԻՐԷ
40-ԱՄԵԱԿԻ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵԿՈՆ**

38-րդ Շրջանային ներկայացուցչական ժողովի աւարտին, «Շերեթրն» պանդոկի սրահներէն մէկուն մէջ կատարուեցաւ Պոսթրնի մասնաճիւղի 40-ամեակին նուիրուած ընթրիքի երեկոն: Նախքան այս ձեռնարկը, կազմակերպուած էր նկարներու ցուցադրութիւն, թէ՛ տեղւոյն մասնաճիւղին 40-ամեակին եւ թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 95-ամեակին առիթով:

Հիւրասիրութենէ ետք, պաշտօնապէս ընթացք առաւ ընթրիքի երեկոն: Այլիք Խաչիկեան, Սարին Մարուխ-





Եղբ. Պեճաքեան յայտնեց, որ հետեւողականօրէն աշխատելով ու ծառայելով ջահը կը փոխանցուի սերունդէ սերունդ եւ Հ.Մ.Ը.Մ. կը շարունակէ գործել:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեւրոպեան իր խօսքին մէջ յայտնեց, թէ պարծանք ու պատիւ է տօնել Պոսթրնի մասնաճիւղին 40-ամեակը: Ան նշեց նա-

եւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութիւնը մեծ է հայաստանի մասին աշխատանքին մէջ, եւ թէ՛ նման հաւաքներ ու հանդիսութիւններ առիթը կը ստեղծեն, որ Հ.Մ.Ը.Մ. վերամշակէ իր գործունէութիւնը եւ արձանագրէ նորանոր նուաճումներ:




Ընթրիքի ընթացքին, յրբեւար Պոսթրնի մասնաճիւղը յուշանուէրով մը պատուեց շրջանէն ներս տարիներ շա-

րունակ ծառայած եղբ. Պետիկ Տէր Վարդանեանը:

Հանդիսավար եղբ. Վիգէն Խաչատուրեան կարճ նկարագրականով մը ներկայացուց 1982-էն ի վեր շրջանէն ներս բնակութիւն հաստատած Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրը, որ վերջին երեսուն տարիներուն հետեւողականօրէն ծառայած է իր անդամակցած միութեան, նախապէս իր ծննդավայր Հալէպ քաղաքին մէջ գործելէ ետք:

Տէր Վարդանեան իրեն ընծայուած պատիւին համար խորապէս զգացուած, յայտնեց, թէ ինք հպարտ կը զգայ որ մաս կը կազմէ այս կազմակերպութեան եւ շնորհակալութիւն յայտնեց:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերն ու եղբայրները վերադարձան իրենց շրջանները քաջալերուած, որ կամաւոր աշխատանքը պէտք է շարունակուի նոյն թափով, բոլոր գաղութներէն ներս, պահելու եւ պահպանելու համար մեր դիմագիծը, ինքնութիւնն ու երիտասարդութիւնը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan 32-38, Hanrabedoutian Street, Yerevan 375010, Armenia Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50 sales@europehotel.am

www.europehotel.am



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԴԻՄԱՑԻՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

Դեկտեմբերի 7-ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի քոյրերն ու եղբայրները վաղ առաւօտից Գիւմրիում էին: Նրանց էին միացել նաեւ «Սաղաղութեան սուրհանդակներ» ծրագրի շրջանակներում սկսողական աշխատանքներ տարուող խնամքի երկու հաստատութիւնների սաները:

Երկրաչարժի զոհերի յիշատակը յաւերժացնող յուշարձանին ծաղիկներ դնելուն յաջորդեց այցը Գիւմրիի կենցաղն ու

աւանդոյթներն ամփոփող Զիթողեանների թանգարան: Այնուհետ կազմակերպուեց այց՝ տնակում բնակող մի բազմազաւակ ընտանիքի եւ նրանց տրուեց դրամական օգնութիւն, քաղցրաւենիք՝ հաւաքուած սկսողականների ջանքերով:

Բաւարարուած իրենց մարդասիրական առաքելութիւնից՝ սկսողականները Ֆրիտոֆ Նանսէնի անուան գիշերօթիկ դպրոցում ճաշեցին հաստատութեան սաների հետ համատեղ եւ սկսողական ծափերով, կանչերով ու խաղերով յագեցած մօտ 2 ժամ անցկացրեցին:

Այս կերպ նրանք եւս մէկ անգամ կեանքի կոչեցին սկսողական առաքելութեան սկզբունքներից մէկը՝ «պատասխանատուութիւն դիմացինի նկատմամբ»:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ԺՈՂՈՎՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

2013 թուականին կատարուած աշխատանքն ամփոփելու եւ յառաջիկայ անելիքները յստակացնելու նպատակով, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի կենտրոնական գրասենեակում անցկացուեց միութեան աստիճանաւորական կազմի տարեմուտի ժողով-հանդիպում: Հանդիպմանը ներկայ էին նաեւ սիրիահայ այն Հ.Մ.Ը.Մ.ական





քոյրերն ու եղբայրները, ովքեր որպէս աստիճանաւորներ սկսել են աշխատանք տանել:

Ժողովականները նախ շնորհաւորեցին միմիանց Ամանորն ու Ս. Մնունդը եւ մաղթեցին, որ 2014 թուականը ըլլայ արդիւնաւէտ տարի: Այնուհետ, ինչպէս Խմբապետական Խորհրդի, այնպէս էլ միաւորների կատարած տարեկան աշխատանքները ներկայացուցին առանձին շնորհահանդէսներով: Վարչութեան անունից միաւորներին ողջոյնի խօսք ուղղեց եղբ. Դաւիթ Յակոբեան:

Հանդիպման եզրափակիչ մասում ներկայացուցին միջազգային ու համահայաստանեան տարեկան գործունէութեան յառաջիկայ ծրագրերը:


ԲՆԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՐՅՈՅԹԻ ՅԱՂԹԱԿԱՆԸ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

«**Խ**աղաղութեան սուրհանդակներ» ծրագրի շրջանակներում սկսուողական աշխատանքներում ներգրավուած Գաւառի մանկատան սաներից Թելման Առաքելեանը կարճ ժամանակահատուածում հասցրեց հասկանալ սկսուողութեան էութիւնը եւ դառնալ երդուեալ սկսուող: Լինելով շնորհալի պատանի՝ 2014-ի ամանորին ընդառաջ եղբ. Թելմանի մօտ միտք ծագեց իր ու ընկերների օգտագործած տետրերի թղթերով պատրաստել տօնածառ: Արդիւնքում ստացուեց գեղեցիկ մի աշխատանք: Թելմանը՝ որպէս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի անդամ, իր պատրաստած տօնածառը ներկայացրեց բնապահպանական տօնածառերի ցուցահանդէս-մրցոյթին: Գաղափարը շատ հետաքրքրեց ժիւրիին ու թղթէ տօնածառը արժանացաւ պատուաւոր առաջին մրցանակի: Թելմանը որպէս յուշ ստացաւ բնական եղեւնի, որը իր իսկ առաջարկով գարնան գալուն պէս կը տնկուի սկսուողական բանակավայրում: Թելմանին խրախուսելու եւ իր հետագայ աշխատանքների համար նիւթեր գնելու նպատակով Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութիւնը որոշեց տրամադրել գումար մը:



'Made from one single slice of natural Australian opal'



Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
 123 Clarence Street
 Sydney 2000
 Australia

Phone: +61 2 9290 2199
 fax: +61 2 9262 1630
 Website: www.classiquewatches.com
 Email: Info@classiquewatches.com

ԵՂԲ. ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

«Ազատ Օր»
ԱԹԵՆՔ

2014-ի առաջին օրը տխուր լուր մը հասաւ Ֆլորիտայէն, հաղորդելով նախկին յունահայ, Հ.Մ.Ը.Մ-ի երկար տարիներու նուիրեալ՝ եղբ. Վահրամ Դանիէլեանի մահուան գոյժը:

Եղբ. Վահրամ Դանիէլեան արժանի գաւազն էր ըլլալով Հ.Մ.Ը.Մ-ական այլ նուիրեալի մը՝ Դանիէլ Դանիէլեանի, ջերմօրէն սիրեց մարզական մեր միութիւնը եւ սիրտ ու հոգի տուաւ՝ միութեան աշխատանքները յառաջ տանելու համար: Ան տարբեր դիրքերէ երկար տարիներ ծառայեց Հ.Մ.Ը.Մ-ին, որպէս անդամ, վարչական, մարզիկ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Հաւատաւոր կուսակցականի իր բծախնդրութեամբ ան ներկայ եղաւ հոն ուր անհրաժեշտ կը դառնար իր ներկայութիւնը: Եւ այս ծառայութիւնը տեւեց երկար տարիներ, միշտ ժպիտով եւ բարեհամբոյր տրամադրութեամբ:


Եղբ. Վահրամ Դանիէլեան Աթէնք այցելած էր քանի մը տարի առաջ, երբ հայրենիքէն կը վերադառնար, մասնակցած ըլլալով համա-Հ.Մ.Ը.Մ-ական 8-րդ մարզախաղերուն, որոնք առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենային Հայաստանի մէջ, միութեան Պատգամաւորական Ժողովին որոշումով:

500-է աւելի մասնակիցներու ներկայութիւնը մարզախաղերուն գոհունակութեամբ կը լեցնէր սիրտը եւ ան հպարտութեամբ կը պատմէր, թէ իսկապէս աննախընթաց էր խաղերուն բացման հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ «Հանրապետութեան» հրապարակին վրայ, 35-40 հազար հայրենակիցներու ներկայութեամբ, երկրի քաղաքական, մշակութային եւ մարզական ներկայացուցիչներուն եւ արուեստագէտներուն մասնակցութեամբ: Այնքան խորհրդանշական պահ մը Հ.Մ.Ը.Մ-ին եւ հայ երիտասարդ սերունդին համար, որ երջանկութեան զգացումներով կը փոթորկէր իր հոգին:

Եղբ. Վահրամ մեծապէս հետաքրքրուած էր հայ երիտասարդ սերունդի ազգային դաստիարակութեամբ, գիտակցելով որ մարզական թէ սկաուտական շար-



ժումներուն ստեղծումը խոր հիմք կու տայ ըսփիւռքահայութեան համախմբուածութեան: Ան




Եղբ. Վահրամ Դանիէլեան 2007-2011 քառամեակի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու իտո:

համոզուած էր, որ հայրենիքի հետ կապը տարիներու ընթացքին պիտի հզօրանայ եւ ներշնչման աղբիւր պիտի հանդիսանայ հայազգի երիտասարդ սերունդներուն համար, այս իմաստով ալ ան կը շեշտէր Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպչական աշխատանքին կարեւորութիւնը, որպէսզի նորահաս սերունդներու մօտ պահպանուին հայութեան արժէքները, ազգային առողջ դաստիարակութեամբ:

Եղբ. Վահրամ երբեք չկորսնցուց իր հետաքրքրութիւնը յունահայ գաղութին հանդէպ: Հեռաւոր Ամերիկայի մէջ ապրելով հանդերձ, ան առօրեայ դրութեամբ կը ստանար «Ազատ Օր»ը, ուրկէ տեղեակ կը պահուէր գաղութի անցու-

դարձերուն, հոգերուն, տազնապներուն եւ յաջողութիւններուն մասին: Ան յատկապէս կը հետեւէր Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի մարզական կեանքին, ուրախանալով ու տազնապելով խումբերու եւ մարզիկներու ձեռքբերած արդիւնքներով:

Եղբ. Վահրամ յետ մահու արժանացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:



ԼԱԻԱՇ ՅԱՑԸ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան ՊԷՅՐՈՒԹ

Լաւաշը նուրբ, երկար, մինչեւ 70 սմ. տրամագիծով հաւկթաձեւ հաց մըն է: Ան հայկական հացատեսակ է: Հայ կանայք հինէն կը պատրաստէին լաւաշ: Արտաշատ քաղաքի պեղումներուն ժամանակ գտնուած է գետնափոր կաւէ թոնիր մը, որուն մէջ կը պատրաստէին լաւաշ: Թոնիրը հայկական խոհանոցի առաջին գործիքներէն է:

Լաշ թխելու համար եւ ասոր օգնութեամբ կը փակցնեն թոնիրի տաք պատին: Քանի մը վայրկեան ետք լաւաշը պատրաստ է:

Լաւաշը աշխարհի ամէնէն երկար պահուող հացն է. ան կրնանք պահել մօտ մէկ տարի: Կը չորցնենք եւ կը դնենք ապահով տեղ մը, երբ ուզենք ուտել, քիչ մը ջուրով կը թրջենք եւ ան կը դառնայ թարմ հաց: Հայկական խոհանոցին մէջ կան ուտեստեղէններ, որոնք կ'ուտեն միայն լաւաշով, օրինակ՝ խաշը:


ԻՆՉՊԻՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ ԼԱԻԱՇԸ

Լաւաշ թխելու համար անհրաժեշտ է չորս-հինգ հոգիի մասնակցութիւն. հացթուխը, գունդերը գրտնակողը, լաւաշը թոնիրէն հանողը եւ լաւաշները դասաւորողը:

ԱՒԱՆԴԱԶՐՈՅՑ ԼԱԻԱՇԻ ՄԱՍԻՆ


Ըստ աւանդութեան, հին Հայաստանի մէջ եղած է Արամ անունով թագաւոր մը. ան կռուի ժամանակ գերի ինկած է ասորիներու թագաւոր Նոսորին: Նոսորը պայման կը դնէ Արամին, որ տասը օր անօթի մնայ, յետոյ իր հետ նետաձգութեամբ մրցի, եթէ յաղթէ՝ ազատ

Այլերով եւ ջուրով խմոր կը շինեն եւ կը բաժնեն մանր գունդերու, յետոյ հաւկթաձեւ բարակ կը բանան գրտնակով, կը տարածեն բացուած խմորը փափուկ բարձին վրայ, որ պատրաստուած կ'ըլլայ յատուկ լա-





կ'արձակուի: Յաջորդ օրը Արամ կը պահանջէ, որ իրեն բերեն իր լանջապանակը: Ասորիներու մտքէն չէր անցներ, որ հայերը զրահի մէջ նրբահաց կը դնեն: Երբ կը բերեն զրահը, Արամ կ'ըսէ, որ իր ուզածը չէ, եւ այսպէս ինը օր շարունակ կը բերեն տարբեր լանջապանակներ, որոնց մէջ խնամքով պահուած կ'ըլլան բարակ լաւաշներ: Տասնմէկերորդ օրը Արամն ու Նոսորը կը մրցին: Նոսորը կը կարծէր թէ Արամը տասը օր անօթի մնացած է եւ ուժասպառ եղած, սակայն Արամ ինքզինք կայտառ կը զգար: Արամ կը յաղթէ մրցակիցին եւ տուն կը վերադառնայ: Վերադառնալով ան հրովարտակ կ'արձակէ, որ այսուհետեւ Հայաստանի մէջ հաստ ու բազմաձեւ հացերուն փոխարէն միայն լաւաշ թխեն:



ԹՈՆԻՐ

Թոնիրը հաց թխելու տեղն է: Ան գետնափոր է եւ կլորաւուն, իսկ պատերը՝ քարապատուած: Հին ժամանակ հայկական գիւղերու քարէ շէնքերուն մէջ կը մտնէին թոնրատուն-խոհանոցը, մառանը, ննջարանները եւ այլ սենեակներ: Թոնրատունը տան ամէնէն կարելոր մասն էր, որովհետեւ ձմրան թոնիրը կը վառէին եւ ամբողջ տունը կը տաքնար: Տուներ կային, որոնք երկու թոնիր կ'ունենային՝ մեծ եւ փոքր: Մեծը՝ հաց թխելու համար, իսկ փոքրը՝ ջուր տաքցնելու եւ կերակուր եփելու համար: Թոնրատան պատերուն մէջ կը փորէին պահարաններ, ուր կը դնէին խոհանոցի սպասները եւ հաց թխելու գործիքները:

Ծերերը եւ փոքրիկները կը քնանային թոնիրին շուրջ: Թոնիրին շուրջ կը նստէին եւ կը մշակէին բուրդ, կաւ:

Ելեկտրականութեան գիւտէն ետք նուազեցաւ թոնրատուններու դերը, որոնք վերածուեցան հացատուներու:

ՀԱՆԵԼՈՒԿ





Ո՞վ է, ի՞նչ է:
Զիւնին սպիտակ
օրօրոցէն,
ինչպէս մանուկն
իր մօր ծոցէն,

Ո՞ր ծաղիկն է մեզ հիւր կու գայ,
Գարնան գալը իմաց կու տայ:
(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 376-ի հանելուկին պատասխանն էր կարապ):

ԶՆՏԱՂԻԿ

Զնծաղիկը շքանարկիզներու շնորհիւ պատկանող կարճ, սոխուկաւոր բազմամեայ խոտաբոյս մըն է: Յայտնի է ձնծաղիկի քսան տեսակ: Կ'աճի նախալեռնային եւ լեռնային անտառներու մէջ: Տերեւները մեծ մասամբ երկուք են եւ գծաձեւ: Ծաղիկները մէկական են, խոնարհած: Կը ծաղկի գարնան սկիզբը: Պտուղը տուփիկ է: Հայաստանի մէջ կ'աճի ձնծաղիկի երեք տեսակ, որոնցմէ երկուքը յիշատակուած է «Կարմիր գիրք»ին մէջ:



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

ՍՈՒՏՈՔՈՒ

	1		5		7		8	
	4			2			7	
2		6				1		3
			2		4			
6		4		3		9		5
			9		6			
1		3				8		2
	9			4			1	
	2		8		5		9	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսինոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

7	8	9	6	5	4	2	3	1
4	2	1	3	7	8	9	6	5
3	5	6	1	2	9	7	4	8
6	1	5	9	8	3	4	2	7
2	7	4	5	6	1	8	9	3
8	9	3	7	4	2	1	5	6
5	4	2	8	3	7	6	1	9
9	6	7	4	1	5	3	8	2
1	3	8	2	9	6	5	7	4


Պատասխանը՝ յաջորդիւ

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Կարկառ, սարաւանդ:
- Հորովակերտ մասնիկ - Կշիռքի հին չափ մը:
- Մանրէ, կենսիկ - Դրկից տառեր:
- Ածականակերտ մասնիկ - Յաւի ճիշ - Կերպասի լայնք:
- 2013 տարեշրջանի Հայաստանի լաւագոյն մարզիկը:
- Ռուսական խորհրդարան - Գոմէշի ձագ - Խաղ:
- Նախամայր - Սպասէ՛ - Չեոնարկած:
- 2000 թուականի Ողիմպիականները հիւրընկալած քաղաքը - Սուտանի լիճերէն, Յուցական դերանուն:
- Ժխտական մասնիկ - Էական բայ - Մօր առաջին կաթը:
- Ճաղատ - Տարիք:
- Փոս ունեցող - Չորցուած սնամէջ դդու:
- Եղեգնացուպ - Երէի:
- Ժխտական մասնիկ - «Ֆորմիլա 1»-ի աւստրալացի մրցավարորդ:
- Ափրիկեան երկիր - Էական բայէն:
- Շարժիլ, երերալ - Հարուած:
- Վերեւ - Տառի մը անունը - Կլոր բուրգ:
- Հանքային համեմ - Ասիական մայրաքաղաք - Յուցական ածական:
- Մէկուն դէմ շարիք նիւթել - Արական օտար անուն:
- Քրէական յանցանք - Կրծող փոքր կենդանի - Հօտի առանջորդ այծ:
- Յոփ, խառնագնաց - Երկրագործական գործիք:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20



ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Որակ - Եկեղեցի - Ճախարակ:
- Միջնադարեան Հայաստանի մայրաքաղաքներէն - Մագլցող բոյս:
- Ճորտին յանձնուած հողաչերտ - Բոնաշխատութիւն - Շանի - Ջրալի ցեխ:
- Դէպի յառաջ ընթացք - Խաբեբայ - Տուրք:
- Ուկանտայի երբեմնի բռնակալ նախագահը (1971-1979) - Ասիական ծով:
- Մանելիք - Մեղքերու թողութեան վայր - Չայնանիչ:
- Իր ամուսինը սպաննող կին - Դաշտիչոն - Քուուակ:
- Նախանձիլ - Այեր - Ջրալոյժ նշայ - Ստացական ածական:
- Մթնոլորտային գոլորչի - Մարտքեան քաղաք - Տնկելի ճիւղ - Շաղկապ - Նախահօր կողակիցը:
- Կրկնուած բաղաձայններ - Հերկահար - Տափակ դդմած - Ծոռնորդի:
- Հանգիստ - Կրկնուած բաղաձայններ - Վասպուրականի գաւառներէն:
- Ամերիկացի թենիսփուժըն - Չին թենիսփուժըն:
- Կիտուած - Ադամանդ - Անձուկ:
- Յուցական ածական - Յունական գիցարանի սիրոյ աստուածը:
- Պետրոս Դուրեանի քերթուածներէն - Աստուածատուր:

ԹԻՒ 211 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՄԻՆԱՐ



Հ.Մ.Ը.Մ.
ԱՒՍՏՐԱԼԻԱ

